№ 72 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 1

1908

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 1 № 72

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան	„		6 դօլլար
Եւրօպա	„	„ „	30 ֆրանկ
Պարսկաստան	„	„	10 րուբլի

Ծանր հիւանդութիւնից յետոյ մարտի 29-ին, առաւօտեան ժամը 8-ին վախճանվեց հայոց Ներսիսեան և քաղ. Արհեստաւորաց դպրոցի նախկին ուսուցիչ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԵՐԱՍԻՄԵԱՆ ՄԵԼԻՔ-ԱԼԼԱՀՎԵՐԴԵԱՆԸ,

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին, ծանօթներին և նախկին պաշտօնակիցներին ամուսինը և զաւակները։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ երեքշաբթի, ապրիլի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Նիկոլաեվսկայա փող. № 64, տուն Ղալայեանցի) դէպի Մողնու եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

1—1

ՍՏԵՓԱՆ ԽՐԻՍՏԱՓՕՐՕՎԻՉ ՍՈՒԼԽԱՆԵԱՆԸ

սրանով պատիւ ունի հաղորդելու, որ, «ՆԱԴԵԺԴԱ» ԸՆԿ. հրդեհներից ապահովագրելու օպէրացիաների լիկվիդացիայի պատճառով, ինքը յանձն է առել

1835 Թ. ՀԻՄՆՎԱԾ

ԵՐԿՐՈՐԴ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

գործակալութիւնը, և խոնարհաբար խնդրում է թէ նախկին ապահովագրողներին և թէ նորերին դիմել իրան, Ֆրէյլինեան և Սօլօլակեան փողոցների անկիւն, տուն իշխ. Ռատիեվայի, տելեֆօն № 108. (уголъ Фрейлинской и Сололакской улицъ, домъ кн. Ратіевой, телеф. № 108, въ К° „Надежда“.)

(Ե. Հ. Շ.) տռ. 3—1

Եղբարք Հ. Ա. և Մ. ՏԷՐՏԷՐԵԱՆՑ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ախալքաղաքում ունենալով շոգեշարժ Վայլցօվեան Ջրաղաց և նոյնպէս հասարակ երկանաքարեր՝ աղալու համար, յանձն է առնում ընդունել Կովկասի բոլոր կայարանների համար ալիւրի պատուէրներ, գլխաւորապէս գիւղական խոշորաղաց ալիւր, և ֆրանքօ հասցնել Եւլախ, Գանձակ և Աղստաֆա կայարանները։ Այդ կայարաններում աղացված ալիւրը կարող է յանձնվել քսակներով, ամեն մի քսակը (6 պուդ) 7 ր. 80 կոպէկով, իսկ Երևանի նահանգի համար պուդին 10 կ. աւելի այդ արժէքից։ Պատուէրները կարելի է ընդունել նաև քսակին 1 ր. 50 կ. վերադիր վճարով։ Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և անմիջապէս։

Հասցէն՝ Ախալքաղ, եղբ. Հ. Ա. և Մ. Տէրտէրեանց։

(Հ. Կ. Ե.) տռ. 3—3

Մեծադիր պատկերների

ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ

ԼԵՒՈՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

(Գանօվսկայա փողոց, № 7)

Ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ՝ լուսանկարած մեծ ու փոքր պատկերներից՝ գեղարուեստական ճաշակով մեծացնելու համար մինչեւ ցանկացված չափը։

Գները մինչև առաջիկայ Զատիկը

ԷԺԱՆԱՑՎԱԾ ԵՆ

3 րուբլուց սկսած։

Արուեստանոցը մինչև Զատիկ բաց կը լինի և կիրակի օրերը մինչև ժամը 4-ը։

(1, 3, 5, 6, 9) տռ. 5—1

Մարտի 16, կիրակի օրից

ԲԱՑ Է

նկարիչ ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆԻ

ՋՈՒՏ

ԱԿՎԱՐԷԼՆԵՐԻ

Ցուցահանդէսը

Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.

Բարեատինսկայա փողոց.

Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։

Մուտքը արժէ 30 կոպէկ։

Աշակերտները և զինւորները վճարում են կէսը։

(Օ. Մ.) տռ. 20—8

ՍԱԿԱՒԱՀՈՂՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

I

«Մշակի» մէջ տպված այսօրվայ հեռագիրները տեղեկացնում են, որ Պետական Դուման սուր վիճաբանութիւններից յետոյ որոշել է յատկացնել որոշ գումար ռուս գաղթականութեան համար Անդրկովկասում։

Ինչո՞ւ պէտք է առաջ գային սուր վիճաբանութիւններ։ Ինչո՞ւ պատգամաւորների մի մասը պէտք է մերժէր ռուս գաղթականութեան ընդարձակման համար ծրագրված գումարների հաստատութիւնը, իսկ միւս մասը պէտք է պնդէր այդ ծախքերի անհրաժեշտութեան վրա և նոյն իսկ սպառնալիքներ կարդար չը համակրողներին և չը համաձայնվողներին։

Անդրկովկասի ազգաբնակութեան համար խնդիրը շատ պարզ է։ Մեր երկրում բազմացել է սակաւահող և հողազուրկ գիւղացիների թիւը և ազատ հողերի պահանջ կայ այդ գիւղացիներին բաւարարութիւն տալու համար։ Անդրկովկասի երկրագործ ազգաբնակութիւնը որոնում է ազատ անկիւններ իր աշխատանքը գործադրելու և իր ապրուստը ապահովելու համար։ Եւ անշուշտ սակաւահող գիւղացու համար կայ մի տրամաբանութիւն, այն է՝ թէ ինչպէս նա կարողանայ ձեռք բերել այդ ազատ անկիւնները իր տնտեսութեան համար։

Եւ եթէ այդ սակաւահող ազգաբնակութիւնը չէ համակրում այն ծրագիրներին, որոնք զրկում են նրան իր յոյսերի իրագործումից, այդտեղ դեր են կատարում տնտեսական նկատումները և չը կայ ռուս տարրի սահմանափակման կամ ուժեղացման խնդիրը։

Միթէ երբևիցէ խօսք է եղել կամ որևէ թիւրիմացութիւն է ծագել այն բանի առիթով, որ ռուս տարրը ստուարանում և ուժեղանում է Անդրկովկասի քաղաքներում։ Միթէ ամենքին յայտնի չէ, թէ ինչպիսի բարի և մտերիմ յարաբերութիւններ կան կովկասցի և ռուս քաղաքացիների միջև։ Եւ միթէ նոյն գիւղական շրջանում երբևիցէ թիւրիմացութիւններ են ծագել ռուսների և կովկասցիների միջև ազգայնական հողի վրա։ Երբէք։

Եւ եթէ Անդրկովկասում այժմ գոյութիւն ունենային ազատ հողերի ընդարձակ տարածութիւններ, ինչպէս 50—80 տարի սրանից առաջ, և ուրեմն բնակութեան տեղեր լինէին բոլոր սակաւահողերի համար, միթէ ով և իցէ խնդիր կը յարուցանէր նոր գաղթականների դէմ։ Եւ յիրաւի՝ միթէ այն գաղթականութիւնների դէմ, որոնք հաստատվել են մեր երկրում այն ժամանակներում, լսված են բողոքներ անդրկովկասցիների կողմից։ Ամենևին։

Անդրկովկասցուն հող է հարկաւոր. սակաւահող գիւղացին ուզում է հող ունենալ իր ապրուստը հայթայթելու, իր տուրքերը վճարելու, իր զաւակներին մեծացնելու, կրթելու և կուլտուրական գործողներ դարձնելու։

Տուէք այդ հողը կարօտեալ գիւղացուն և ապահովեցրէք նրա կեանքը։ Մի դնէք այնտեղ կողմնակի քաղաքական նպատակներ և կովկասեան սակաւահողութեան դիմաց հանդէս մի բերէք ռուս տարրի սահմանափակման կամ ուժեղացման խնդիրը, մի տարրի, որի հետ կովկասցին եղել է մտերիմ և բարեկամ յարաբերութիւնների մէջ և որի հետ միասին նա ցանկանում է գործել ընդհանուր պետական բարօրութեան համար։

Սակաւահողութեան հարցը պէտք է լուծվի տնտեսական հողի վրա։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 29 մարտի

Գաղթականութեան նախահաշւի քննութեան ժամանակ Տիմօշկինը պնդում էր, որ Անդրկովկասը պէտք է բնակեցնել ռուս գաղթականներով։

Մարկօվը մի շովինիստական ճառով նախազգուշացնում էր տեղական մշտական ժողովուրդներին՝ ճանապարհը չը փակել։

Բոլոր մեր պատգամաւորները բողոքեցին։

Հասարակ ձայնատուութեամբ՝ 169 ձայնով ընդդէմ 156-ի՝ աջակողմեանների առաջարկութիւնը մերժվեց։

Աջակողմեանների պահանջով, բացարձակ քուէարկութիւնը վախեցնում է հոկտեմբերեաններին, և Անդրկովկասը ռուս գաղթականներով բնակեցնելու առաջարկը անցնում է 211 ձայնով ընդդէմ օպպօզիցիայի 135-ի։

Աջակողմեանները ծափահարեցին՝ որ յաղթութիւնը տարան, օպպօզիցիան ծափահարեց՝ որ հոկտեմբերեանները պարտութիւն կրեցին։

Արսէն Քալանթար

—

Լվով, 30 մարտի

Այսօր, ցերեկվայ ժամը 2-ին, ընդունելութեան ժամանակ, մի անյայտ մարդ ատրճանակի երեք հարուածով սպանեց Գալիցիայի փոխարքայ կոմս Պոտօցկուն։ («Հ. Գ.»)

—

Դօկումենտների գողութիւնը արտաքին գործերի մինիստրութիւնից Կ. Պօլսում

Թիւրքաց արտաքին գործերի մինիստրութիւնից դօկումենտներ գողանալու համար ի միջի այլոց ձերբակալվել է ռուսական դեսպանատան թարգմանի օգնական Հաջիբուարի որդին։ Հարցն ու փորձը տեղի ունեցաւ ռուսաց դեսպանի թոյլտուութեամբ և արտաքին գործերի մինիստր Թէվֆիկ-փաշայի ներկայութեամբ։ Սուլթանի կեանքի դէմ հայերի և երիտասարդ թիւրքերի դաւադրութեան նիւթեր գտաւ քննութիւնը։

—

Դաւադրութիւն Կ. Պօլսում

Վիէննայից հեռագրում են «Globe» լրագրին, Կ. Պօլսից ստացված տեղեկութիւնների հիման վրա, որ թիւրքաց իշխանութիւնները գտել են դաւադրութիւն, որ ուղղված էր Credit Lyonnais բանկի դէմ Կ. Պօլսում և որը ուզում էին օդը թռցնել։ Շատ հայեր և յոյներ են կալանաւորված։ Այդ առիթով լուրեր են պտտում, որ դաւադիրները, որոնց թւում կան ամենքին յայտնի անձնաւորութիւններ, ուզում էին դինամիտ անցկացնել Պէրայից, բայց այդ բանը չաջողվեց նրանց։

—

Նոր դաւադրութիւն սուլթան-Համիդի դէմ

«Matin» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը մարտի 15/28-ին գրում է. «Բացվեց մի նոր դաւադրութիւն սուլթանի կեանքի դէմ։ Այս գործը կապ չունի այն վերջինի հետ, որ նորերս բազմաթիւ ձերբակալութիւնների առիթ տուեց։ Դաւադիրները 2 ռուս են, յեղափոխական կոմիտէների ներկայացուցիչ, որոնք մեծ գումար են ունեցել իրանց հետ և կանխաւ որոշված մի ծրագրով եկել են Կ. Պօլիս։ Նրանցից մէկը Վլադիմիր, անունով, բռնվեց, բայց ռուսական դեսպանատան ճնշման տակ արձակվեց և այժմ գտնվում է Kreuker-ի պանդոկում, հսկողութեան տակ։ Իսկ միւսը, որի անունը յայտնի չէ, եռանդով փնտռվում է։ Credit Lyonnais բանկը, ուր նա եղել է, շրջապատված է։ Հադիժհան*) (Hadijhan) անունով անձը, որ անցեալ տարվայ դաւադրութեան գործում մեղադրվել էր իբրև մեղսակից, ասում են թէ այժմեան դաւում էլ խառն է։ Արտաքին գործերի մինիստրութեան մէջ նրան երկար հարցաքննութիւններ են ենթարկել պ. Զինօվիեվի ներկայութեամբ։ Պալատը այս գործին տեղեկացել է աւստրիական դեսպանատան կողմից նրան ուղղված մի տեղեկագրից։ Այս տեղեկագիրը մանրամասնօրէն պատմում է մարդասպանների ծրագիրը»։

—

Վիէննա, 29 մարտի

«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պօլսից, որ, անկախ հեռագրական գործակալութեան հաղորդած հիւպատոսական տեղեկութիւններից և հաղորդագրութիւններից, զինւորական շրջաններում պնդում են, որ Բ. Դուռը Կովկասի սահմանագլխի վրա պատերազմական պատրաստութիւններ չէ տեսնում։ Երզնկայում, 4-րդ զօրաբանակի մէջ, Թիւրքիայի կատարած պատերազմական սակաւաթիւ ձեռնարկութիւնները կարող են բացատրվել բացառապէս նրանով, որ մի կողմից թիւրք-պարսկական սահմանագլխային միջնադէպը դեռևս լուծված չէ, միւս կողմից, ինչպէս վերջերս հաղորդվեց, երկիւղներ կան, թէ գալիք ամիսներում յեղափոխական շարժում է բռնկվելու հայերի մէջ։(«Հ. Գ.»)։

—

Պետերբուրգ, 28 մարտի

Կովկասի լրագիրների հաղորդած այն լուրը, որը և վերջում արտատպեց մայրաքաղաքի մամուլը, թէ աջակողմեանները մտադրութիւն ունեն Պետական Դումայում մօտիկ ապագայում հարցապնդում անել Ամենայն Հայոց Կաթողիկոս նշանակելու մասին, բոլորովին հիմքից զուրկ է։ Ոչ ոք և ոչ մի ժամանակ հայկական եկեղեցու գործերի մասին հարցապնդում անել չէ մտադրում։ („Т. Л.“)

—

Կ. Պօլիս, 30 մարտի

Պաշտօնապէս յայտարարված է, որ իտալական գեներալ Րօբիլանդը, որին յանձնված է Մակեդոնիայի ժանդարմերիայի վերակազմութեան գործը, նշանակված է թիւրքաց զօրաբանակի գեներալ։(«Հ. Գ.»)

—

Բագու, 30 մարտի

Բալախանում, երէկ ցերեկով ատրճանակով անյայտ անձեր ծանր վիրաւորեցին «Նեֆտ» ռուսական ընկերութեան նաւթահանքերի կառավարչի օգնական ինժեներ Պլէնուշկովին կառքի մէջ, իսկ կառապանին սպանեցին։

Մօրսկայա փողոցում սպանված են մի ոստիկան և անցորդ պարսիկ։(«Հ.Գ.»)

—

Սօֆիա, 29 մարտի

Վերջերս միայն աւարտված մակեդոնական ներքին կազմակերպութեան գաղտնի համագումարը նոյնպէս մի որոշում կայացրեց այն բարենորոգումների վերաբերութեամբ, որ մեծ պետութիւնները ցանկանում են գործադրել Մակեդոնիայում։ Որոշման բանաձևի մէջ ասվում է. «Ներքին կազմակերպութիւնը ընդունում է բարենորոգումների սոսկ այնպիսի նախագիծ, որպիսին կը համապատասխանէ բուլղարական մինիմալ պահանջներին, որոնք նախ և առաջ կայանում են նրանում, որ Մակեդոնիայի վարչութիւնը անկախ լինի Կ. Պօլսից»։(Հ.Գ.»)

—

Մերձաւոր Արևելքի գործերի դրութեան մասին վիճաբանութիւնները Դումայում կը սկսվեն առաջիկայ շաբաթ, արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն քննելու ժամանակ։

—

Թիւրքական թնդանօթաձիգ զօրքերի հրամանատար է նշանակված վերջին ռուս-թիւրքական պատերազմի ժամանակից յայտնի գեներալ իշխան Տատգիրիձէն. Թիւրքական զօրաբանակի գլխաւոր շտաբի գլխաւոր է նշանակված գեներալ Բեժանաշվիլին։ Այդ երկուսն էլ մահմեդական վրացիներ են։ («Зак.»)

—

«Рус. Сл.» լրագիրը իր սեփական թղթակցից ստացել է հետևեալ հեռագիրները.

Բեռլին, 24 մարտի.—Բալկանեան դիպլօմատներից մէկը հաղորդել է ձեր թղթակցին, որ Մօսկվայի լուրերը թիւրքական պատերազմական պատրաստութիւնների մասին անկասկածելի ճշմարտութիւն են։ Նրան Պօլսից գրում են, որ Ելդըզ-Քեօշկում ընդհանուր դժգոհութիւն է տիրում ռուսական բարենորոգումների նախագծի առիթով և հետզհետէ սաստկանում է րեվանշի կողմնակիցների ազդեցութիւնը։ Խաղաղասէր սուլթանը աննկատելի կերպով ընկել է այդ կուսակցութեան ազդեցութեան տակ, որը յոյս ունի, Ռուսաստանի հետ ընդհարվելու դէպքում, աջակցութիւն գտնել Գերմանիայի կողմից։ Առհասարակ, այդ դիպլօմատի կարծիքով, եթէ Մակեդոնիայի բարենորոգումների հարցը ծանր հետևանքներ առաջացնելու լինի, դրա ամբողջ յանցանքը պէտք է լիովին ընկնի Գերմանիայի դիպլօմատիայի վրա, որը անդրկուլիսային խաղ է խաղում Թիւրքիայի հետ։

Պրագա, 24 մարտի.—Պետերբուրգի քաղաքային դումայի ձայնաւոր Վօլօդիմիրօվը խորհրդակցել է այստեղի սլաւեանօֆիլների հետ համասլաւոնական կօնգրեսի մանրամասնութիւնների մասին։ Խորհրդակցութիւնը անհրաժեշտ է գտել նախապատրաստական ժողով հրաւիրել, որին իւրաքանչիւր սլաւօնական ազգ, անկախ իր թւից, կուղարկէ ժամանակելու մի-մի պատգամաւոր։ Այդ խորհրդաժողովի տեղը որոշված է Պրագան և պէտք է լինի սեպտեմբերի 15-ին։ Նիստերը տեղի էին ունենում դռնփակ։

Բուքարեստ, 24 մարտի.—Կրակովի շրջանից արտաքսում են «պօտեօմկինցիներին», որոնց վրա կասկածում կայ, թէ ապստամբութեան դրդումներ են անում։

—

«Р. Сл.» լրագրին Կարսից հեռագրում են մարտի 24-ին, որ զինւորական նահանգապետի կարգադրութեամբ մասնաւոր եկւորները իրաւունք ունեն քաղաքում մնալու մի օրից ոչ աւելի։

—

Մարտի 28-ին Պետերբուրգից հեռագրում են «Касп.» լրագրին.—Կոմս Բոբրինսկին վերաւորված Պետական Դումայի նիստում Միլիւկովի կողմից իրան ուղղված «սուտ է և զրպարտութիւն» խօսքերից, մօտեցաւ Միլիւկովի պատգամաւորական աթոռին և ուղղակի հարցրեց. «Դուք կուե՞լ էք ուզում»։ Միլիւկովը պատասխանեց. «Ձեզ հետ չեմ կռւում»։ Ցետագայ բացատրութիւնների ժամանակ Միլիւկովը յայտնեց, որ մենամարտի հրաւէրը երբէք չի ընդունի։

---

*) Գուցէ Հաջիբէյ։

Ծալտայի գեներալ նահանգապետ Դումբաձէի ապօրէն գործողութիւնների մասին, որով նա վարկաբեկում էր կառավարական իշխանութիւնը, Դումայի երէկվայ նիստում արված հարցապնդումին ստորագրել են հոկտեմբերեանները։ Քաղաքացիական պահանջները քննելու համար գեներալ Դումբաձէն կազմել էր պատահական մի մարմին բաղկացած խալրամիէկից, ժանդարմների ռոտմիստրից և գեմսկի կառավարչից։ Այդ մարմնի վճիռները անբեկանելի էին։ Հաղորդում են դէպքեր, երբ մեղադրական վճիռների յայտարարումը ընկալվում էր «ես քեզ, անպիտանի...» խօսքերով։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրին իրաւունք է վերապահվում փակել ծնողական կօմիտէները անկարգութիւնների դէպքում։ («Б.»)

—

Բօբրինսկու և Միլիւկովի միջադէպը վերջացել է Պետական Դումայի մարտի 28-ի նիստում Միլիւկովի յաղթութեամբ, որը օգտվել է ամբիոնից կուսակցական նպատակի համար և ապացուցել է Բօբրինսկու ստախօսութիւնը։ Օպպօզիցիան համակրական ցոյց է սարքել յօգուտ Միլիւկովի։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ջիվանշիր, 21 մարտի

Մեր գաւառապետի կարգադրութեամբ այսօր գիւղօրայքից սայլեր ուղարկվեցին Եւլախ կայարան։

Կառավարութեան բաց թողած նպաստը (ցորեն) արդէն եկել է Եւլախ։ Այնտեղից կը փոխադրվի գաւառի կենտրոնը՝ Թարթար աւանը, որտեղից և կը բաժանվի կարօտեալ գիւղացիներին։ Նպաստի քանակն առ այժմ յայտնի չէ։ Հարկ եղած ժամանակ այդ առիթով կը գրեմ։

Սիւնեցի Լեօն

—

Զաքաթալա, 28 մարտի

Ամսիս 25-ին պատահած դէպքի մասին մեր ադմինիստրացիան դեռ ևս միջոցներ ձեռք չէ առել աւազակներին կալանաւորելու. միայն նոյն օրը կօզակներ ու զինուորներ ուղարկեց քաղաքիս 6 վերստի վրա գտնված Մաձէխ անունով գիւղը, ուր խուզարկութիւններ կատարելով՝ մեծ քանակութեամբ զէնք են գրաւել...

Թալանել են ճամբորդներին Խուրմա Օրա ու Մաձէխի միջանքը, Թիֆլիս տանող խճուղու վրա. գիւմացը մի մեծ անտառ է, ուր և թաքնվել են մարդ-գազանները։

Եթէ այդ աւազակային շայկաները այժմեանից իսկ չոչնչացվեն, սարսափելի չափեր կառնեն, որովհետև հաստատ աղբիւրից տեղեկացայ, որ Թալայից էլ խմբեր են գալու, որոնք անհամբեր սպասում են ծառերի տերևակալելուն։

Պօղոս Ստեփանեանը երէկ դիմեց պ. կառավարչին և նկարագրեց իր և այլոց կրած սարսափելի վնասները աւազակների ձեռքից. Նրա համաձայնութեամբ կառավարիչը նոյն օրը մի ընդարձակ հեռագիր խփեց Փոխարքային. ժողովուրդն էլ յուզված է։ Նա էլ ուզում է հեռագիր տալ Նորին պայծառափայլութեան։

Մեզ մօտ ամեն բան թանգ է։ Հաղորդում եմ կենսական մթերքների գները. ցորենի պուդը 2 ր., գարին 1 ր. 25 կ., ալիւրը (տեղական) 2 40 կ., հացի փութը (տեղ.) $4\frac{1}{2}$ կ., տաւարի միսը 11 կ., ոչխարինը 20 կ., ձուի 3-ը 5 կ., հաւը 50—55 կ., իւղը 40 կ., սիմինդրի պուդը 90 կ., կորեկի պուդը 1 ր. 10 կ., բրինձը 2 ր. 50 կ.։

Տեղացի

—

Ղազախ, 14 մարտի

Փոքրիկ քաղաքիս սակաւաթիւ հայերը, թւով մօտ 60 ընտանիք, չը նայելով իրանց թալանված ու տնտեսապէս քայքայված դրութեան, կուլտուրական ասպարէզում չը կամենալով յետ մնալ բազմահայ ու հարուստ ուրիշ վայրերից, միացած ոյժերով կարողացան բաց անել թէ ծխական դպրոց և թէ բարեգործական ընկերութեան ճիւղ։ Մեր նպատակն է լարված ոյժերով գործել, որ գաւառիս կենտրոնում, ուր վիճակված է մեզ ապրել, պահել մի այնպիսի դպրոց, որը կը կարողանար բաւականութիւն տալ [illegible] ծարաւ մանուկներին աւելի մեծ չափով, քան արել են այդ՝ գաւառումս մինչև այժմ գոյութիւն ունեցող բոլոր դպրոցները։

Զաք. բ. Ապրեսեանց

—

Բաթում, 20 մարտի

Ահա թէ ինչ չնչին բաներից են ծագում ազգային ատելութիւնը, թշնամութիւնը, անմիտ եղբայրասպան կռիւները, մասսայական ընդհարումները։

Երէկ, երեկոյեան, երկաթուղագծի վրա, որտեղից ճանապարհը անցնում է դէպի ծովափ և որտեղից երթևեկում են շարունակ դրօգները, տեղի ունեցաւ մի դէպք, որը հաւաքեց մի խոշոր բազմութիւն։ Երկաթուղու պահապանը (վրացի) կատարելով իր պարտականութիւնը՝ արգելում է մի հայ դրօգապանի իր դրօգով անցնել գծի վրայից, քանի որ անցնելու է գնացքը և դժբաղդութեան դէպքում ինքը պահապանն է պատասխանատու։ Դրօգապանը ուշադրութիւն չը դարձնելով ոչ նրա նախազգուշացմանը և ոչ էլ սպառնալիքին՝ անցնում է գծից։ Պահապանը, որը այդ րոպէին փոքրիկ դանակով եղունգներն էր կտրում, դրօշակի հետ միասին բռնած մի ձեռքում, հասնում է նրան և նրա անհնազանդութեան, յանդգնութեան համար դրօշակի ծայրը ուղղում է դիմացինի վզին։ Հարուածը վրիպում է և քսվելով վզին՝ անցնում է և մի փոքր քերում մորթը, որից արիւն է դուրս գալիս։

Եւ ահա այս տեսարանը իր վրա դարձրեց մարդկանց ուշադրութիւնը և հաւաքեց մի ստուար բազմութիւն գլխաւորապէս հայերից, որոնք եկան «օգնելու» իրանց հայ եղբօրը։ Խեղճ պահապանը ամբոխից վախենալով փախաւ և մտաւ իր տնակը։ Ամբոխի միջից շատերը գոռում գոչում յարձակվեցին տնակի վրա բացականչելով՝ «խփեցէք, ջարդեցէք, վրացին ինչ է, որ յանդգնի հային խփել, ամօթ չէ՞ մեզ, հայ չէ՞նք» և այլ այսպիսի անմիտ դարձուածքներ, առանց քննելու թէ ով էր նրանցից մեղաւոր և ինչ հետևանք կունենար իրանց այդ վարմունքը։

Մի քանի խելացի և փորձված անձանց շնորհիւ, որոնք յորդորելով և ցոյց տալով, որ իրաւունք չունեն պահապանի տնակի վրա յարձակվել, որի համար խիստ կը տուժեն և որ եթէ այդ րոպէին պահապանը մի քանիսին սպանի՝ կարող է արդարանալ, կարելի եղաւ կարգը վերականգնել և յուզված կրքերը հանգստացնել։

Անմիջապէս կանչվեց ժանդարմ, որը և կազմեց արձանագրութիւն դէպքի առիթով։

Նօմադ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, մարտի 30 ին, Հասարակական գրադարանի դահլիճում կայացաւ հայոց ազգագրական ընկերութեան կենտրոնական ընդհանուր ժողովը։ Նիստը բաց արեց խորհրդի նախագահ պ. Ա. Մելիք-Ազարեան և առաջարկեց ընտրել ժողովի նախագահ և քարտուղար։ Նախագահ ընտրվեց Ա. Բալանթար, քարտուղար Գ. Լևոնեան։

Օրակարգի խնդիրներին անցնելուց առաջ խորհրդի քարտուղար-անդամ Ե. Լալայեան կարդաց զեկուցում ընկերութեան միամեայ գործունէութեան մասին։ Զեկուցումից երևաց նոյնպէս, որ խորհրդի գլխաւոր հոգսերից մէկն է այժմ հիմնել ազգագրական-հնագիտական թանգարան և մարդաբանական կովկասագիտական գրադարան։ Ե. Լալայեան շեշտեց այդ հիմնարկութիւնների մեծ չափով կարևոր լինելը մեր երկրի, մեր կեանքի, մեր պատմութեան և կուլտուրայի ուսումնասիրութեան խնդրում։ Թւեց այն մեծ անյարմարութիւնները, որ ներկայումս Կովկասի անցեալով, մեր քաղաքակրթութեան ուսումնասիրութեամբ զբաղվողը ստիպված է օտար տեղերի թանգարաններում և գրադարաններում նիւթեր որոնել, մինչդեռ մեր երկրում նիւթերի մեծ հարստութիւն կայ ցրված զանազան գաւառներ և անկիւններ։ Ցիշեց՝ թէ ինչպէս ազգագրական զանազան իրեր անդարձ կորստից փրկելու համար որքան ջանք և միջոցներ են գործ դնում ուրիշ ազգերի այդ տեսակի ընկերութիւնները։

Բժ. Վ. Արծրունի հետաքրքրվեց իմանալ թէ արդեօք մի որևէ կապ կա՞յ մեր ազգագրական ընկերութեան և Մոսկվայի ազգագրական ընկերութեան միջև։

Ե. Լալայեան բացատրեց, որ հայոց ազգագրական ընկերութիւնն էլ նոյնքան լիազօր է իր գործունէութեան մէջ, որքան Մոսկվայինը, և ոչ մի առնչութիւն չունի նրա հետ։

Ա. Բալանթար ցանկութիւն յայտնեց, որ ընկերութիւնը մօտիկ ապագայում մի բազմամարդ խորհրդակցական ժողով գումարի, մարդիկ հրաւիրելով մեր գաւառներից։

Մեսրոպ վարդապ. ցանկալի համարեց մատենադարանների ապակենտրոնացումը տեղական ուսումնասիրութիւնների համար։

Մի քանի հարցեր արծարծելուց յետոյ նախագահ Ա. Բալանթար առաջարկեց ժողովին ընտրել պատուաւոր անդամ պրոֆեսոր Ն. Մարրին։

Ե. Լալայեան տուեց կենսագրական տեղեկութիւններ նրա մասին, թւեց նրա ծառայութիւնները և գործունէութիւնը ուսուցչական, գիտական, մատենագրական, ազգագրական-հնագիտական, հրապարակախօսական և այլ ասպարէզներում։ Ժողովի առաջ դրեց նրա աշխատութիւնները, իր կողմից արժանաւորագոյնը համարելով նրան պատուաւոր անդամութեան։

Ժողովը պրոֆեսոր Մարրին ընտրեց պատուաւոր անդամ միաձայն և ծափահարութեամբ։

Ա. Մելիք-Ազարեան առաջարկում է կարդալ ընկերութեան մօտանցեալ գործունէութեան հաշիւը։

Ե. Լալայեան կարդում է այն հաշիւը, որը ստուգված և ստորագրված է վերաստուգիչ յանձնաժողովի անդամների կողմից։

Ժողովը ընդունում է այդ հաշիւը։

Կարդացվում է և առաջիկայ գործունէութեան նախահաշիւը, որը նոյնպէս ընդունվում է ժողովի կողմից։

Ե. Լալայեան յայտնում է, որ բացի Ալէքսանդրօպոլը, Կարսը, Երևանը և Նոր-Բայազէտը, որ ընկերութեան ճիւղեր ունեն հաստատած, նոր ճիւղեր բաց անելու խնդիր են տուել Շուշին, Նախիջևանը և Ախալքալաքը։ Ժողովը յարգեց այդ խնդիրը։

Պ. Խարազեան բողոք յայտնեց ճիւղերը կենտրոնի հետ բոլորովին անկապ լինելու մասին։

Պարոնի բողոքը իրաւացի համարվեց, պատճառաբանվելով միայն՝ որ նոր-նոր են կազմակերպվում։

Ա. Բալանթար դրեց ընտրութիւնների հարցը, որ խորհրդից և խմբագրական մասնաժողովից հեռացող անդամների տեղ պէտք է նորերն ընտրել։

Գ. Լևոնեան կարդում է անցեալ ընդհանուր ժողովի արձանագրութիւնը։

Ընտրութիւնների հետևանքը։ Խորհրդի անդամներ և փոխանդամներ—տ. Ղարաջեան, տ. Դօլուխանեան, տ. Ցովհաննիսեան, պ. Բարսամեան։

Խմբագրական մասնաժողովի անդամներ և փոխանդամներ—Ս. Տէր-Աւետիքեան, Ս. Ցակոբեան, Խս. Ցարութիւնեան, Գիւտ ա. ք. Աղանեան։

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ—պ. պ. Ս. Խարազեան, Մամուլեան, Շիրինեան։

Ժողովը, որ բացվել էր ժամը 12-ին, փակվեց մօտ 3-ին։

Զ.

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

—

(Հեռագրով)

Նիստ մարտի 28-ի

Նիստը բացվում է ցերեկվայ ժամը 2 և 30 րօպէին։ Նախագահում է Ակիմօվը։

Պետական քարտուղարը զեկուցանում է, որ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հաստատել Պետական Դումայի և Խորհրդի ընդունած այն օրինագիծը, որի համաձայն Տօկիօյի կայսերական միսսիան վերափոխվում է դեսպանութեան։

Ապա խորհուրդը քննութեան է առնում այն օրինագիծը, որ վերաբերում է Բէլսկի և Խօլմսկի և հինգ լեհական ու մի լիտվական ուսուցչական սեմինարիաներում լեհական լեզուն աւանդելու հարցին։

Օրինագծին տրվում է նոր համապատասխան անուն, և նա ձայների ճնշող առաւելութեամբ յանձնվում է կրկին Դումային։

Ցայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 4 և 10 րօպէին։ Կարդացվում է մինչև միջարարը խորհրդի ընդունած օրինագծի ամբողջ բովանդակը։

Խորհուրդը այնուհետև քննում է այն օրինագիծը, որ վերաբերում է Իզմայիլսկի գաւառի ազգաբնակութիւնից այսպէս կոչված ճանապարհների հաղորդակցութեան պահպանութեան տուրքերի ժողովելը վերացնելուն։

Սաբուրօվի, Կօվալէվսկու, Տիլլօվի, մինիստրի օգնական Լօկօշինի, Պօկրօվսկու, իշխ. Կասատկինի և Րօստօվսկու ճառերից յետոյ նիստը յետաձգվում է ապրիլի 2-ին։ («Հ. Գ.»)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Կովկասեան զինուորական նահանգական դատարանին են յանձնված 1) Բօրչալուի գաւառի գիւղացի Դալլակով, որ մեղադրվում է 1907 թ. դեկտ. 16-ին Սանահինի ճանապարհին իր աւազակախմբով, որի միւս պարագլուխներ՝ Զուբինօվը, Վերմիշեվը, Պօղոս Դալակօվը ներկայումս փախստական են, կալուածատիրուհի Շուշանիկ Բալանթարեանի և Առոյեանի վրա յարձակվելու և նրանց զերելու մէջ. 2) գիւղացիներ՝ Նադիրաշվիլի և Չիլինգարօվ, որոնք մեղադրվում են Բաթումում ոստիկանի և թաղական վերակացուի կեանքի դէմ մահափորձ կատարելու մէջ։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԹԻՎ*)

—

Այնուհետև սկսվում են ճառախօսութիւնները։ Իբրև իլլիւստրացիա, իբրև չափազանց բնորոշ պատկեր, ուր հանդէս էր բերված կաթողիկոսական ընտրութեան հակառակորդ ծայրայեղ մտածողների կամ աւելի շուտ ծայրայեղ ձևացողների փրազեօրութեան ամբողջ պաշարը, քննադատական թիւրիմացութիւնների և տափակ սրախօսութիւնների հետ միասին, մենք ամփոփ կերպով կարձանագրենք նրանց։

Խաչմանեան.—Ներկայ լինելով թէ անցեալ և թէ ներկայ ժողովին, ես նկատում եմ, որ կաթողիկոսական ընտրութեանը նշանակութիւն տուողների մէջ միաձուլված են երեք հոսանքներ. քաղաքական, հասարակական և կրօնական։ Պէտք է պարզ դնել խնդիրը և այդ երեք հոսանքները տարբերել իրարից, որովհետև քաղաքական հոսանքին իրաւունք ունեն մասնակցելու բոլոր հայերը։ Հարկաւոր է եկեղեցին բաժանել ժողովրդից, որպէսզի միւս հոսանքները կարողանան մասնակցել ազգովին։ Քաղաքական և հասարակական կեանքի համար ստեղծված պետը անկախ պիտի լինի Էջմիածնից։ Ուստի առաջարկում եմ այդ երեք իրար ժխտող տարրերը՝ քաղաքական, հասարակական և կրօնական հարցերը պարզել ընտրողների առաջ։

Նախագահը կանգնեցնում է ճառախօսին, նկատելով որ նա շեղվում է հարցից։

Աւս. Վաչեանը (Բագուից) սրամիտ կերպով հարց է տալիս ճառախօսին. «Մենք լսել ենք որ եկեղեցին պետութիւնից կարելի է բաժանել, բայց չեմ հասկանում ինչ է նշանակում եկեղեցին ժողովրդից բաժանել։ Կը խնդրէի բացատրել»։ (Ծափահարութիւններ)։

Խաչմանեան.—Հարկ չը կայ բացատրել նրանց, որոնք այդպիսի տարրական բաներ չեն հասկանում։ (Ընդհանուր ծիծաղ. իսկ յետոյ կմկմալով ուզում է շարունակել, բայց նախագահը չէ թոյլատրում)։

Ա. Տէր-Գրիգորեան. — Անցած անգամ պայման էր դրված, որ կաթողիկոսական ընտրութեան ոչ-կողմնակիցները չը խօսեն, բայց այստեղ հէնց իրանք կողմնակիցները խախտեցին այդ պայմանը և խօսեցին ժողովրդի անունից։ Ես էլ ուրեմն իմ կարծիքըն եմ յայտնում։ Լէօն ուզեց ապացուցել միայն, որ հայոց կաթողիկոսը ունի քաղաքական ու կուլտուրական դեր, որից սակայն պարզ երևում է, որ այդ դերը միայն զէնք է ծառայել, ինչպէս այդ յիշեց Առաքելեանը։ Ինձ զարմացնում է այն, որ Լէօն այդ բանի դէմ հակառակը առարկեց։ Ահարոնեանը կաթողիկոսի ներկայացուցչի հետ Հաագայի կօնֆերանսը գնալը և ընդունելութիւնը բերեց իբրև փաստ։ Ես կարծում եմ, այո, լաւ ընդունեցին, բայց ոչինչ չարեցին։ Պարզ է, որ պետութիւնները կաթողիկոսութիւնը աշխատում են իրանց ձեռքին զէնք միայն դարձնել։ Զափազանցութիւն են տալիս նաև կուլտուրական գործօն վերագրելիս. պետական ազատ կարգերը մտցնելուց յետոյ այդ դերն էլ կոչնչանայ։ Ջեմստվօ մտցնելը այդ դերից հարիւր անգամ աւելի նշանակութիւն ունի մեզ համար։ Մնում է երրորդ հոսանքին, այսինքն կաթողիկոսի կրօնական նշանակութեան, և ամենատաղտ հոսանքը այդ է, որովհետև այդ հոսանքի ներկայացուցիչները պահանջում են ՝բարեկարգութիւն, կրթված հոգևորականութիւն, որպէսզի աւելի ճարպիկօրէն բարձրացնեն հոգևորականութեան ազդեցութիւնը և իրանց ցանցի մէջ առնեն ժողովուրդը։

Նախագահը նորից նկատում է ճառախօսներին, որ պէտք է խօսել կաթողիկոսի ընտրութեան գործնական հարցերի շուրջը։ Ապա թէ ոչ անհնարին է այդպէս շարունակել ժողով։

Սօլօվեան.—Քանի որ այստեղ խօսվեց փոքրամասնութեան մասին, ես իմ ճառը կը սկսեմ Իբսենի խօսքերով, որը ասում է, որ աշխարհիս պահպանողականները պատկանում են մեծամասնութեան։ Կաթողիկոսութեան նշանակութեան մասին այստեղ կան երեք հակադիր հոսանքներ։ Լէօն խօսեց նրա քաղաքական դերի մասին, Առաքելեանը՝ հոգևորական, իսկ Բալանթարը՝ իրականութեան և միևնոյն ժամանակ դուրս եկաւ իրականութեան սահմանից։ Կաթողիկոսի իրաւունքը միայն եկեղեցին է, իսկ մնացեալը, ինչ որ վերագրվում է նրան, ուտոպիա է։ Ես խղճի վրա բռնացած լինել չեմ ուզում. ընտրեցէք կաթողիկոս, բայց ընդհանուր ժողովրդի անունից մի խօսէք։

Գարեգին վարդ.—Իմ համեստ կարծիքով, այս վիճաբանութիւնները դրված են սխալ հողի վրա և ծուռ էլ կը գնան։ Ես կուզեմ դնել նրան սկզբունքային հողի վրա և ասել, թէ ինչ ուղղութիւն պիտի ստանան մեր ցանկութիւնները։ Ես չեմ կեղծի, թող ինչ կուզենան ինձ անուանեն. անուանեն կղերական, պահպանողական և այլն. ես կուզեմ պարզ խօսել. եկեղեցու ամենակարևոր սկզբունքը կամ կոչումն է բարոյական դաստիարակութիւն ներշնչել։ Քաղաքակրթական տեսակէտից եկեղեցին կարելի է համեմատել պետութեան հետ. նա էլ ունի իր կուլտուրական ֆունկցիաները։ Դրանով ես ուզում եմ ասել, որ կուլտուրա և եկեղեցի տարբեր չեն։ Մենք ուզում ենք, որ մեր եկեղեցին վերածնվի, բարեփոխվի, որպէսզի իր նպատակներին աւելի ճիշտ ծառայի։ Այդ է հայ եկեղեցու էական նշանակութիւնը. այդ տեսակէտից էլ պէտք է նայել կաթողիկոսի վրա։ Քաղաքական խնդրում նա պիտի ծառայի իր հօտի շահերին. քաղաքական կուսակցութիւնների ձեռքին նա խաղալիք չէ։

Նախագահը կրկին անգամ յիշեցնում է ժողովի նպատակը և ապա խօսք է տալիս միւս ճառախօսներին։

Ա. Աթանասեան.—Իմ ասելիքը ընկեր Տէր-Գրիգորեանցը արդէն ասաց։ Գալով խնդրին, ձեր ուշադրութիւնն եմ դարձնում այն հանգամանքի վրա, որ բարեբաղդաբար Սամօյլօվը և Մենշիկօվը այստեղ ներկայ չեն, թէ չէ՝ լսելով Բալանթարին պիտի կարծում էին, որ հայերը սեպարատիստներ են։ Բալանթարը, որ ջերմ խօսում է զեմստվօյի մասին, այսօր զեմստվոյին գործունէութիւն սպասում է հոգևորականութիւնից։ Մինչդեռ կաթողիկոսի կուլտուրական դերը բնականօրէն ոչնչանում է զեմստվօն մտցնելուց յետոյ։

Առասխանեան.—Մասնաժողովը կաթողիկոս ընտրելու հարցի վերաբերմամբ լիովին համերաշխ է։ Մեր դիտաւորութիւնները ծուռ չեն և նպատակ ունեն օգտակար բան անել ժողովրդի համար։

Գ. Վարդանեան.—Ժողովի նպատակները ես շատ լաւ եմ ըմբռնել. այստեղ խօսում են հայ բուրժուազիան և հայ հոգևորականութիւնը, որոնք միացած կակալ են կոտրում մեզ պրօլետարներիս և թշուառ թիւրքահայերիս գլխին։ Մենք չենք թողնի այդ. թէև Առաքելեանը մեզ «փոքր հոսանք» անուանեց, բայց պէտք է նկատեմ այդ առիթով, որ փոքր հոսանքի առջև փախչում էիք դուք անցեալ տարի։ Ապա այն քաղաքական դերը, որ վերագրվում է հոգևորականութեան, սխալ է. նա Զէյթունի կամ այլ կռիւներին չի մասնակցել։ Հոկտեմբերի 17-ից յետոյ այդպիսի գաղափարներով չի կարելի կերակրել հայ ժողովրդին։

Մամիկոնեան.—Այստեղ չէ դրված այն հարցը թէ՝ կաթողիկոսը բաւականութիւն կը տայ նրանց, որոնք կողմնակից չեն։ Ի հարկէ, ո՛չ։ Զարմանալին այն է, որ նրանք, որոնք խօսում են Զանգեզուրի կամ Ախալցխայի ժողովրդի անունից, ժխտում են կաթողիկոսի նշանակութիւնը։ (Դիմելով ատողներին) Դուք չէք համարձակվի այնտեղ ժխտել կաթողիկոսի նշանակութիւնը (ծափահարութիւններ)։ Մի կեղծէք, պարոններ, պատմական հանգամանքները մեզ դրել են այնպիսի պայմանների մէջ, որ ուզենանք չուզենանք պէտք է այդ եկեղեցու շուրջը պատենք։ Այդպէս է մտածում ժողովուրդը, և նրանք, որոնք խօսում են ժողովրդի անունից, պէտք է ղեկավարվեն նրա հոգեբանութեամբ։ Մի ժխտէք այն, որ ժողովուրդը, դառնութեան մրուրը քամելով, հաւատարիմ է մնացել եկեղեցուն. խոնարհեցէք ժողովրդի այդ կամքի առաջ և ընդունեցէք կաթողիկոսի նշանակութիւնը (ծափահարութիւններ)։

Նախագահը կրճատում է խօսողների թիւը։

Լէօ.—Այն առարկումներին և յարձակումներին, որ արեցին իմ դէմ, ես կը տամ իմ բացատրութիւնները։ Ես բերել եմ պատմութիւնը իր փաստերով. իմ նպատակն էր միայն ցոյց տալ, որ եղել են ժամանակներ, երբ չեն օգտվել մեր կաթողիկոսները։ Քանի որ դրութիւնը դեռ ևս չի փոխվել, իբրև եզրակացութիւն, ասում եմ, որ պիտի աշխատել, որպէսզի կաթողիկոսի այդ իշխանութիւնը եթէ մեզ օգուտ չը բերի, գոնէ չը վնասի էլ։ Եթէ իմ զեկուցման մէջ հայոց հարցը մեծ տեղ է բռնում, պատճառը այն է, որ փաստերն էլ այդ են ասում։ Իսկ եթէ կաթողիկոսներին այդ հարցում միշտ զէնք են դարձրել, դա բնական է. քաղաքական հարցերում այդ ակսիոմա է։

Նախագահը.—Խոնարհաբար խնդրում եմ սկզբունքային ընդհանուր հարցերը թողնել և խօսել՝ թէ ինչ ֆունկցիաներ պիտի ունենայ ապագայ կաթողիկոսը։

(Կը շարունակվի)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵԼԻՔ-ԱԼԼԱՀՎԵՐԴԵԱՆ

—

Ցաւօք սրտի պէտք է արձանագրենք Ալէքսանդր Մելիք-Ալլահվէրդեանի մահը։ Հանգուցեալը երկար տարիներ ուսուցչական ծանր պաշտօն է վարել Ներսիսեան և Միքայէլեան արհեստաւորաց դպրոցներում, ուր աւանդում էր մաթեմատիկական և բնական գիտութիւններ։ Հանգուցեալը յայտնի էր որպէս բարեխիղճ և հմուտ ուսուցիչ և սիրված էր իր աշակերտներից։ Ունի նա և մի քանի գրական աշխատանքներ և ֆիզիկայի մի դասագիրք, որ հրատարակել է Հրատարակչական ընկերութիւնը։ Սակայն վերջին երկու տարիների անցքերը իրանց այլանդակ արտայայտութիւններով նրան ևս անմասն չը թողին, և նա ստիպված եղաւ թողնել իր սիրած ուսուցչական գործը և մասնաւոր կեանք վարեց։ Երկար տարիների տանջալից աշխատանքը և, ինչպէս ասացինք, վերջին երկու տարվայ ցաւալի դէպքերը այնպիսի խորին հետքեր թողեցին հանգուցեալի վրա, որ նա հիւանդացաւ մի անբուժելի հիւանդութեամբ, վերջն էլ դրա վրա թոքերի բորբոքումն աւելանալով՝ վերջ դրեց հանգուցեալի կեանքին։

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք—1) Քէբիից (Անդրկասպեան երկիր) Ա.-ից 30 րուբլի, 2) Մերվից, տեղական հայ թատերասէրների խմբի փետրվարի 23-ին տուած ներկայացման արդիւնքի մի մասը—77 ր. 40 կ., Գրիգոր Աստղեանի ձեռքով, 3) Նիժնի-Դնեպրօվսկ կայարանից (Եկատ. երկաթ.) ինժեներ Խ. Միրզայեանի ձեռքով հանգանակած—96 ր., 4) Կարսից, Գ. Գրիգորեանի ձեռքով Մանուկ Աբրահամեանցի տօնախմբութեան օրը հանգանակած—8 ր. 5 կ., 5) Եկատերինոդարից, Մնացական Բալզուրեանից՝ 10 ր., 6)

---

*) «Մշակ» № 71։ Առաքելեանի ճառում բաց է թողնված մի բառ. Ասված է. «Միզանում մի հոսանք նոյնիսկ քարոզում էր» պէտք է լինի՝ «մի փոքրիկ հոսանք...» և այլն։

Բագուից, Ղևոնդ քահ. Տէր-Աստուածատրեանից (տես առանձին նամակ խմբ.)—65 ր.։

Ծան. խմբ.—«Մշակի» № 17-ում տպված Խարկովից ուղարկված 10 րուբլին նուիրել է ոչ թէ Մկրտիչ Գրիգորեանը, այլ Մկրտիչ Կրուկրեանը։

ՕԳՏՎԵԼ Է ՊԷՏՔ

Այժմ, երբ բարեգործութեան կարօտ և սպասող հայը բաղդ ունի տեսնելու նախկին բարեգործ. ընկ. բացված և այն էլ աւելի լայն և մեծ իրաւունքով, մեզ մնում է խնդալ և աշխատանք կրկնապատկել ու ընկերութեան ճիւղեր բացել մեր մի շարք կարիքաշատ գաւառներում. Թերևս տիրող մեծ կարիքների դէմ ընկերութիւնը կռուել կարողանայ և պահանջին բաւարարութիւն տայ որոշ չափով։

Ընկերութեան ճիւղեր հիմնել է հարկաւոր մեր այն գաւառներում, ուր կարիքներն աւելի մեծ են, ուր թշուառութիւնը աւելի մեծ չափեր ունի։ Այո՛, ընկերութիւն պիտի հիմնել կարիքաշատ գաւառներում, որպէսզի դրսի օգնութեան հետ՝ ներսի կաթիլ-կաթիլ օգնութիւնն էլ իր յատուկ դերը կատարի։

Գաւառացի երիտասարդները անշուշտ պիտի մտածեն, որ իրանց ծննդավայրի կարիքներից գոնէ մէկը-երկուսը ընկերութիւնը կարող է լրացնել, և աշխատել է պէտք աւելի շուտ բացելու այդ ընկերութիւնը։

Վերցնենք Զանգեզուրը, որի տասնեակ գիւղերի երիտասարդները հայրենի օջախ, տուն, տեղ թողած՝ օտար քաղաքներում են ապաստան գտել. մի՞թէ այդ երիտասարդները իրանց ծննդավայրում ընկերութեան ճիւղ բացելու կարիք չեն տեսնում։ Գորիսը գաւառի սիրտն է. սիսիանցին, ղափանցին և բուն զանգեզուրցին ամենից սերտ կապ ունեն Գորիսի հետ, քան թէ այլ տեղի։ Եւ ցրված, Բագւում, Անդրկասպեան երկրի մի շարք քաղաքներում ապրող զանգեզուրցիք սուրբ պարտականութիւն պիտի զգան դըժբաղդ Զանգեզուրի սրտում բարեգործ. ընկ. ճիւղ բացելու, որի գոյութիւնը քաղցած, ուսման, դպրոցի կարօտ, գիւղատնտեսական որևէ ճիւղից զուրկ գաւառացու համար անչափ օգտաւէտ կարող է լինել։

Զանգեզուրի երեք գաւառամասերից դըրսում ապրող երիտասարդութիւնը թող ձայնակցող լինի իմ կոչին և հետևող հարևան գաւառների երիտասարդութեան գործունէութեան։ Դրսեցիները ներսեցիների, բնիկ գաւառում ապրողների հետ նպաստել կարող են ընկերութեան բացվելուն և նիւթապէս օգնելուն, իւրաքանչիւրը իր չափով, իր ուժերի համեմատ։ Սպասենք և յուսանք։

Սաղանդարեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Կիրակի, մարտի 30-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում, յօգուտ Ալճաղեան լսարանի, սիրողների մի խումբ տուեց իշխան Սումբատովի «Դաւաճանութիւն» տրագեդիան։ Այս անգամ Զէյնաբի պատասխանատու և դժուար դերը կատարում էր մի ջահել հայ օրիորդ, Ի. Ա. Ալէքսանդրեան կեղծանունով։ Օրիորդը իր հիանալի խաղով, իր գեղեցիկ ռուսերէն առոգանութեամբ, իր մտածած, նոյնիսկ մանրամասնութիւնները ուսումնասիրած շարժումներով, ձևերով, նոյնիսկ զգեստների յարմարութեամբ ցոյց տուեց, որ նա, արդարև, կարող է բեմի զարդ լինել։ Օրիորդը ուսումնասիրել էր ոչ միայն իր դերի արտաքին կողմերը, այլև պատմութիւնը, պատմական էպօխայի առանձնայատկութիւնները։ Եւ շնորհիւ այդպիսի բարեխիղճ, մանրամասն ուսումնասիրութեան, շնորհիւ նաև բնածին ձիրքի, նա կարողացաւ ստեղծել Զէյնաբից մի կատարելատիպ, որի նմանը մենք շատ քիչ ենք տեսել Թիֆլիսի բեմի վրա։ Օրիորդը խոստանում է փառաւոր ապագայ, եթէ միայն իրան նուիրելու լինի բեմին։ Նուիրելով իրան բեմական արուեստին, օրիորդը կարող է և մայրենի բեմի զարդ դառնալ։ Մանաւանդ գեղեցիկ տարաւ իր դերը ամբողջ երրորդ գործողութեան մէջ, իսկ մի մեծ արժանիքն էլ այն էր, որ դերը գիտէր շատ լաւ և ոչ մի պէտք չունէր յուշարարի, մի արժանիք, որից այնքան զուրկ են մեր շատ պրոֆէսիոնալ դերասանուհիները և դերասանները։

Ռուքայայի դերը նոյնպէս լաւ խաղաց մի ուրիշ սիրողուհի, Գ. Գագեան։ Առհասարակ ամբողջ ներկայացումը հաճելի տպաւորութիւն թողեց։

Հ. Ա.

—

Եգիպտոսից Թիֆլիս է եկել մի երիտասարդ ջութակահար Գիւզենեան ազգանունով։ Այս ջութակահարի երաժշտական ունակութեան մասին համակրական և գովասանական յօդուածներ են նուիրել, բացի Եգիպտոսի հայկական լրագիրներից, նաև ֆրանսիական շատ օրաթերթեր։

Շնորհալի ջութակահարը հինգշաբթի, ապրիլի 3-ին, Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում տալու է մի համերգ, որի ծրագիրը մենք կը տանք վաղը։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲՈՒՄ

Շաբաթ, մարտի 29-ին, երեկոյեան, «Դրամատիկական կուրսերի» բնակարանում (Միքայէլեան փողոց, № 123), տեղի ունեցաւ «Հասարակական կլուբի» համեստ բացումը։ Հաւաքված էր 100-ից աւելի երկսեռ բազմութիւն, թէ անդամներ և թէ հիւրեր։ Այդ երեկոն միևնոյն ժամանակ «Հասարակական կլուբի» առաջին երեկոյթն էր, որ, ինչպէս և պէտք էր սպասել, միանգամայն տարբերվում էր մեր կլուբների սովորական երեկոյթներից։ Հէնց ինքը կլուբն էլ, գոնէ առայժմ, միանգամայն տարբերվում է մեր միւս կլուբներից, ուր առաջին տեղը թըղթախաղն է բռնում։ Սա պարզապէս մի ժողովարան է, ուր մարդիկ հաւաքվում են հասարակական զանազան խնդիրներ քննելու, նրանց մասին կարծիքներ փոխանակելու և բազմակողմանի լուսաբանութեան ենթարկելու։

«Հասարակական կլուբի» այս առաջին երեկոյթի քննութեան առարկան Կովկասում զեմստվօներ մտցնելու հարցն էր, որի մասին նախ մի դասախօսութիւն կարդաց Գ. Մ. Թումանովը, և ապա մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ Ա. Քալանթարի նախագահութեամբ։

Խիստ հետաքրքրական էր պ. Թումանովի դասախօսութիւնը, բայց ցաւում ենք, որ տեղի սղութեան պատճառով անկարող ենք նրա վրա կանգ առնել։

Երեկոյթի երկրորդ բաժինը գրականական-երաժշտական կտորներից էր կազմված, որին մասնակցում էին Է. Լ. Սոկոլովա, Պ. Մ. Դօլուխանեան, Ա. Ֆ. Կեսներ, Բ. Գ. Շերուեվ և ուրիշներ։

Երեկոյթը վերջացաւ ժամը 11-ին, և հասարակութիւնը ցրվեց շատ գոհ սրտով։ Երկրորդ երեկոյթը տեղի կունենայ եկող շաբաթ օրը, ապրիլի 5-ին, նոյն շինութեան մէջ։

Ր.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

—

Նիստ մարտի 28-ի

Նիստը բանում է նախագահ Խօմեակօվը ժամը 11 և 16 րոպէին։

Հերթին դրված է նախահաշուի մասնաժողովի զեկուցումը՝ երկրագործութեան վարչութեան—բաժիններով հանդերձ, շինական անտեսութեան, գիւղատնտեսական ստատիստիկայի և հողային բարելաւումների ելեմտի նախահաշուի վերաբերութեամբ։ Զեկուցանում է Զվեգինցեվը։ Ծախսը կըրճատված է 30,877 րուբլով և հասցված է է 5,799,161 ր.։

Նախ քան հարցի քննութեան անցնելը, Դուման, նախագահի առաջարկութեամբ, յոտնկայս յարգում է նորերս վախճանված պատգամաւոր Ռոդիոնովի յիշատակը։

Խօսում են Շինգարեօվ, Գրաբսկի, Եֆրեմօվ 2-րդ, Ալէքսէեվ, Շիդլօվսկի, որից յետոյ Դուման ընդունում է մասնաժողովի առաջարկած կրճատումը։

Այնուհետև քննվում է անտառային վարչութեան ելմուտը։ Զեկուցանողն է Մենշիկօվը։ Մասնաժողովը ծախսը կրճատել է 365,675 րուբլով և դարձրել է 18,710,977 րուբլի։

Խօսում են Շինգարեօվ, անտառային վարչութեան վերատեսուչը, Ժուկօվսկին, Նեկլիւդօվ։ Դուման ընդունում է հերթական գործերին անցնելու բանաձևը, որ առաջարկում է նախահաշուի մասնաժողովը, և ձեռնարկում է քննել նախահաշիւը ըստ ելմտի համարների։

Պայմանական գումարայատկացումները մնում են, ելմտի բոլոր համարները ընդունվում են նախահաշուի մասնաժողովի բանաձևերով։

Նիստը փակվում է ժամը 6 և 40 ր.։

Նիստ մարտի 29-ի

Նիստը բացվում է ժամը 11 և 15 րոպէին։ Նախագահում է Խօմեակօվը։

Հերթին դրված է գաղթականութեան վարչութեան ելմտի նախահաշուին վերաբերող բիւջէտային մասնաժողովի զեկուցումը։ Զեկուցանողն է իշխ. Գօլիցինը։

Դզիւբինսկին մանրամասն կանգ է առնում Սիբիր դիմած գաղթականութեան դրութեան վրա, բազմակողմանի կերպով լուսաբանելով նրան տեղական կեանքից վերցրած բազմաթիւ օրինակներով։ Հռետորը կարծում է, որ գաղթականական քաղաքականութիւնը համակերպ չէ բնաւ ազգաբնակութեան շահերին, այլ հետևանք է յատուկ ենթադրութիւնների և ընթացել է զիգզագներով։ Յենվելով փաստերի վրա, Դզիւբինսկին այն եզրակացութեան է գալիս, որ պէտք է իրագործվեն բիւջէտային և գաղթականական մասնաժողովների ցանկութիւնները, որոնք և կը կարգաւորեն գործը և նրան կը դնեն պատշաճ նօրմայի մէջ. սակայն գաղթականութեան ամբողջ կազմակերպութիւնը պէտք է փոփոխվի. նա պէտք է դուրս գայ բիւրօկրատիական գործերից։

Խասմամեդօվ մահմեդական ֆրակցիայի կողմից պաշտպանում է ղրղզներին, գըտնելով, որ մինչև այն նախագծի հրատարակութիւնը, որ ներկայումս կազմվում է ղրղզների իրաւունքները ապահովելու մասին, նրանք կարող են բոլորովին զրկվել այն սեփական հողերի դարաւոր իրաւունքներից, որ առատութեամբ յատկացվում են գաղթականութեան համար։ Ի նկատի ունենալով այդ, պնդելով դէպի Թուրքեստան, Անդրկովկաս և Ստէպի շրջանները ուղարկվող գաղթականութեան դատարի վրա, հռետորը յայտնում է, որ մահմեդական ֆրակցիան ձայն կը տայ յօգուտ նախահաշուի, բացի նրա այն մասից, որ վերաբերում է ղրղզների հողերի վրա գաղթականութիւն հաստատելու համար գումարներ յատկացնելուն։

Վինօգրադօվը կարծում է, որ գաղթականութեան մէջ կառավարութիւնը տեսնում է ագրար հարցի լուծումը և ոչ թէ գաղութներ հիմնելու անհրաժեշտութիւնը։ Բերելով զանազան փաստեր, հռետորը եզրակացնում է, որ հարկաւոր չէ այնքան հոգ տանել գաղթականութեան մաշտաբը լայնացնելու մասին, որքան գաղթականներին իրանց տեղերում հաստատուն կերպով հաստատելու մասին։ Վերջում հռետորը յայտնում է, որ սահմ.-ռամկ. ֆրակցիան կարծում է, որ անհրաժեշտ է արմատապէս վերակազմել գաղթականութիւնը, բայց ուշադրութեան առնելով որ այդ հարցը ամբողջութեամբ դեռ չէ քննվել գաղթականական մասնաժողովի մէջ, միանում է բիւջէտային մասնաժողովի առաջարկած բանաձևին (ծափահարութիւն աջակողմում)։

Ժամը 1 և 16 րոպէին յայտարարվում է մի ժամով ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 2 և 10 րոպէին։ Նախագահում է իշխ. Վօլկօնսկի։

Տիմօշկինը կանգ է առնում Կովկաս դիմող գաղթականութեան հարցի վրա, գտնելով որ եթէ այդ գաղթականութիւնը մեծ չափեր ընդունէ, ահագին օգուտ կը բերէ ոչ միայն ռուս գիւղացուն, այլ և ռուս կառավարութեան, և՛ ռուսական ֆինանսներին, միաժամանակ ամուր պատուար կը դառնայ Անդրկովկասի համար։ Վերջում հռետորը յայտնում է, որ աջակողմեանների ֆրակցիան, ի լրումն բիւջէտային մասնաժողովի բանաձևի, ցանկանում է ընդլայնել գաղթականութեան րայօնները և պարզել Կովկասի գաղթականական վարչութեան գործունէութիւնը, որոնց վրա կարելի է ռուս գաղթականներ բնակեցնել։ (Աջակողմը ծափահարում է)։

Սվենցիցկի յատկապէս կանգ է առնում գաղթականներին տեղափոխելու հարցի վրա։ Բերելով տեղափոխութիւնը բարելաւող մասնաժողովի գործունէութեան նըկարագիրը և մատնանշելով, որ մտադրութիւն կայ յատուկ յարմարեցված վագօններ ստեղծել գաղթականներին տեղափոխելու համար, հռետորը գաղթականական մասնաժողովի երրորդ բաժնի կողմից խնդրում է աւելի մեծ զգուշութեամբ վերաբերվել դէպի խնդրվող գումարները և ընդունել այդ գումարայատկացումները առանց կրճատելու։

Նեկլիւդօվ հոկտեմբերեանների ֆրակցիայի յանձնարարութեամբ մի քանի ուղղումներ է մտցնում բիւջէտային մասնաժողովի բանաձևի մէջ այն մտքով, որ չը քանակելով գիւղացիներին և օտարազգիներին, չը յիշելով կօզակներին, ուղղակի առաջ պիտի բերել այն ընդհանուր դրութիւնը, որ վարչութիւնը ձգտելու է, որպէսզի տեղական ազգաբնակութեան իրաւունքները չը խախտվեն (ծափահարութիւններ)։

Հէյդարօվը գտնում է, որ կառավարութեան գաղթականական քաղաքականութիւնը բորբոքում է կրքերը և թշնամութիւն է յարուցանում առանձին ազգութիւնների մէջ, հասցնելով մինչև անգամ արիւնահեղ ընդհարումների ղրղզների և գաղթողների մէջ։ Վերջում հռետորը կարդում է սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի առաջարկած բանաձևը, որ մերժում է գաղթականական վարչութեան նախահաշիւը։

Գաղթ. վարչութեան կառավարիչը, առարկելով նախկին հռետորների մի քանի նկատողութիւններին, մատնանշում է, որ ոչ մի կերպ չէ կարելի ասել, թէ հողաբաժին աշխատանքների արժէքը թանգանում է, թէ հողաբաժին աշխատանքները համարեա կիսով բաժանված են անտառային և անապատային շրջանների մէջ։ Իբրև ապացոյց, որ գաղթավայրի համար անպէտք հողաբաժիններ չեն յատկացվում, ծառայում է այն փաստը, որ յատկացված հողաբաժինները, հազիւ ստանալով վերջնական հաստատութիւն, ձմեռվայ ամիսներում բոլորն էլ արդէն բաժանված են գաղթողների մէջ։

Բիւջէտային և գաղթականական մասնաժողովների ցանկութիւնները միանգամայն համապատասխան են վարչութեան հայեացքներին։ Եթէ այդ ցանկութիւնները մինչև այժմ իրագործված չեն հարկաւոր չափով, դա բացատրվում է մի կողմից յատկացվող միջոցների ոչ այնքան լիակատար հասկացողութեամբ, իսկ միւս կողմից կառավարութեան՝ դէպի գաղթականութեան գործը ունեցած հայեացքի պակասաւորութեամբ։ Այժմեան օրը, երբ գաղթականութեան նախահաշիւը առաջին անգամ քննվելու է Պետական Դումայում և երբ Դուման կասէ իր վերջին և վճռական հայեացքը գաղթականութեան գործի և նրա զարգացման և ընդլայնման վերաբերութեամբ, որովհետև գաղթականութեան գործի նշանակութեան մասին կառավարութեան ունեցած կարծիքը այդպիսով սանկցիա կը ստանայ Դումայի վճռով, միայն այդ ժամանակից կարելի է խօսել յետագայ կատարելագործութիւնների մասին։

Սխալ է այն կարծիքը, թէ վարչութիւնը, ընդլայնելով գաղթականութեան մաշտաբը, հոգս չէ տանում բնակեցրած գաղթականների կարիքների մասին, քանի որ այն մարդիկ, որոնք բարձրանում են իրանց տեղերից, ոչ մի խնամք չեն ստանում, բացի արտօնաւոր տարիֆից։ Արհեստական կերպով, ագրարային անկարգութիւնները ճնշելու համար, գաղթականական շարժումը մեծացնելու մասին այդ բոլոր մեղադրանքների մէջ հին մեղադրանքների արձագանքներն են լսվում։ Գաղթականութեան հոսանքը աճում է ինքն իրան։ Բռնութեամբ մարդկանց իրանց տեղերում պահել, արգելելով առաջ գնալ՝ անկարելի է. ներկայումս, չը նայած որ գաղթականութեան հոսանքը կանգ է առել, անիրագործելի է գաղթողների թիւը կրճատել։ Բոլոր երկաթուղիները լի են գաղթողների խմբերով։

Ղրղզների և գաղթողների միջև արիւնահեղ ընդհարումների մասին մեզ ոչինչ յայտնի չէ. իսկ անցեալ տարի, ղրղզների և գաղթականների մէջ տեղի ունեցած մի քանի տուրուդմբոցը փաստ չէ, թէ ամբողջ ղրղզ ազգաբնակութիւնը թշնամաբար է տրամադրված դէպի ռուս ազգաբնակութիւնը։ Իսկապէս ղրղզ ազգաբնակութիւնը և ռուս գաղթականները ապրում են հաշտ և սիրով։

Բոլոր աշխատանքների դադարը, մինչև հողային բարեկարգութեան օրէնքների հաստատումը Պետական Դումայի ձեռքով, իր հերթին կը դադարեցնէ ամբողջ գաղթականական հոսանքը և բոլոր հողաբաժին աշխատանքները։ Ղրղզների հողային բարեկարգութեան օրինագծի մտցնելը մեր վարչութեան նպատակներից մէկն է կազմում։ Դրա համար արդէն շատ բան է արված, սակայն այդ գործը դժուար է և օրէնքը մտցնելը կը հետևէ աշնանից ոչ շուտ (ծափահարութիւններ)։

Սուվչինսկին գտնում է, որ եթէ գաղթականութեան հոսանքը տարէ-տարի աճում է, սակայն գործը այնպէս վատթար չէ, ինչպէս ջանացին պատկերացնել նրան հռետորներից մի քանիսը։ Ի հարկէ, նա զուրկ չէ պակասութիւններից և պահանջում է համաձայնեցնել փոփոխվող պայմանների հետ օրըստօրէ աճող գաղթականութեան շարժման ազդեցութեան տակ։ Չափաւոր աջակողմեանների կողմից նա միանում է բիւջէտային մասնաժողովի բանաձևին, հանդերձ հոկտեմբերեանների ուղղումներով։ (Ծափահարութիւն աջակողմում)։

Նեկրասօվը, իբրև Սիբիրի ներկայացուցիչ, ընդգծում է, որ գաղթականութեան գործի շուրջը ստեղծվեց վերին աստիճանի վնասակար և սիբիրցիների համար ամօթալի մթնոլորտ, երբ թէ Սիբիրի նահանգների ներկայացուցիչները և ամբողջ Սիբիրը դէմ են դէպի Սիբիր դիմող ամեն տեսակ գաղթականութեան, երբ թէ Սիբիրի լօզունգն է՝ «Սիբիրը սիբիրների համար»։ Այդ ենթադրութիւնը բղխում է նոյն աղբիւրից, որտեղից էլ որ բղխում է սիբիրական սեպարատիզմի լեգենդան։ Որպէսզի այդ նախապաշարմունքը ցրէ, հռետորը իր պարտքն է համարում յայտնել, որ Սիբիրի ներկայացուցիչները հարկաւոր են համարում յատկացնել այն բոլոր գումարները, որ անհրաժեշտ են տարերային գաղթականութիւնը համաչափ և րացիոնալ գաղթավայրերի վերածելու համար։

«Եթէ մեր՝ սիբիրցիներիս վերաբերութեամբ Դուման, առհասարակ նոր վերածնված Ռուսաստանը, այն խորթ մայրը չի լինի, որպիսին մեզ համար հին րէժիմն էր, եթէ աքսորական գաղթականների տեղ, որոնց մեզ մօտ սկիզբներում ուղարկում էին, դուք մեզ կը տաք առողջ երկրագործ ազգաբնակութիւն, որը Սիբիրի մշտական բնակիչ կը դառնայ և կը զարգացնէ երկրի կուլտուրական կեանքը, եթէ էժան տարիֆների փոխարէն դուք մեզ հնարաւորութիւն կը տաք ազատ կերպով ապրանքներ փոխանակել, եթէ այժմ գոյութիւն ունեցող վարչական խնամակալութեան փոխարէն կը տաք մեզ սիբիրական այն զէմստվօն, որին մենք երազում ենք, այն ժամանակ կը չքանան ո՛չ միայն խօսակցութիւնները, այլ և սիբիրական սեպարատիզմի լուրերը»։ (Ծափահարութիւններ բոլոր աթոռներից)։ («Հ. Գ».)

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մարտի 29-ին, Թիֆլիսում, «Ֆանտազիա» այգում, Թիֆլիսի նահանգի ազնուականների մի խումբ, ի պատիւ Փոխարքայի յօբելեանի, նախաճաշ էր սարքել։ Նախաճաշին ներկայ էր ինքը Փոխարքան իր ընտանիքով և շքախմբով։ Բացի դրանից ներկայ էին նաև Պետերբուրգից և Մօսկվայից յօբելեանի առիթով եկած պատգամաւորութիւնները։

◆ Անդրկովկ. երկաթ. կառավարիչը, համաձայն Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան միջնորդութեան, թոյլատրել է քաղաքային սանիտարական բժիշկներին մուտք ունենալ «Թիֆլիս» կայարանի ապրանքապահեստները՝ քննելու և նմուշներ վերցնելու պահեստում պահվող ալիւրից, միայն այն պայմանով, որ երբ անպէտք ալի՛ւր գտնվի, հէնց այդտեղ չը գրաւեն, այլ այն տեղերում, ուր այդ ալիւրը տարվում է։

◆ Ներկայումս ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հարցումներ է ուղղում զանազան տեղեր՝ իմանալու նպատակով, թէ միջնակարգ դպրոցները ո՞ւմ են արդեօք աւարտման վկայականներ տուել։ Մինիստրութիւնը այդ անում է՝ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջին երեք տարվայ ընթացքում բարձր կրթական հաստատութիւնները մտել են շատ շատերը կեղծ վկայականներով։ Միայն Թիֆլիս քաղաքի վրա այդպիսի կեղծ վկայականներ ընկնում են 31 հատ։

◆ Մի օրիորդ, որ ամեն տեսակ զրկանքներով և զոհաբերութիւններով կարողացել է պատրաստվել՝ մտնել դպրոց և շարունակել իր ուսումը, այժմ թոշակ չը վճարելու պատճառով ստիպված է զրկվել ուսումից, որի աւարտման համար միայն մի տարի է մնացել։ Բարերարները, որոնք կուզենան օգնել օրիորդին, կարող են հասցնել իրանց նպաստները «Մշակի» խմբագրութեան։

◆ Այսօր կովկասագիտական բարձր դասընթացքներում (Ալէքսանդրեան այգի) տեղի կունենայ Գ. Սմիրնօվի դասախօսութիւնը Կովկասի օգտակար հանքերի մասին (մարգանէց)։

◆ Մարտի 29-ին, Թիֆլիսում, ոստիկանութիւնը խուզարկեց «Հերմէս» տպարանը և գրաւեց միայն մի քանի անլէգալ բրօշիւրներ։

◆ Մարտի 30-ին ոստիկանութիւնը գրաւեց Թիֆլիսում վրացերէն լեզուով հրատարակվող «Մեր Աշխարհը» շաբաթաթերթը։

◆ Մարտի 29-ին Թիֆլիսում, 9-րդ քաղաքամասում խուզարկութիւն կատարելուց և մի քանի զէնքեր գտնելուց յետոյ՝ ոստիկանութիւնը ձերբակալեց 18 հոգու։

◆ Թիֆլիս քաղաքում և նրա շրջակայքում զինուորական հաստատութիւնների գրաւած քաղաքային հողերի արժէքը, քաղաքային վարչութեան մինիմալ հաշւով, անում է մի միլիոնից աւելի րուբլի։

◆ Ժողովրդական համալսարանների վարչութիւնը որոշել է այսուհետև վճարել կիրակի օրերով դասախօսութիւններ կարդացողներին։

◆ Թիֆլիսի նահանգապետը, քաղ. կան. 118 րդ յօդուածի համաձայն, հաստատել է դումայից վերընտրված իշխ. Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկին քաղաքային վարչութեան անդամի պաշտօնում առաջիկայ քառամեակի համար։

◆ Ստացանք Բ. Իշխանեանի «Ազգային պրոգրէսը և դասակարգային շահերը» (սօցիօլոգիական պրօբլեմներ), 310 էջ, գինը 50 կոպ.։

◆ Մարտի 27-ին կայացաւ Թիֆլիսի էլեքտրաքարշի և ֆունիկուլեօրի վրա հսկող դումայական մասնաժողովի նիստը։ Մասնաժողովը որոշեց էլեքտրաքարշի գծի վրա ամառնային երթևեկութիւն չը մտցնելու համար, 1907 թ. սեպտեմբերի 7-ից մինչև հոկտեմբերի 1-ը, անօնիմ ընկերութեանը ենթարկել 20,000 րուբլի տուգանքի։ Կայարանի մօտ, գնացքների գալու ժամանակ, գիշերով երեքական վագօն չը թողնելու համար մասնաժողովը որոշեց ընկերութիւնից տուգանք առնել 400 ր. 27 օրվայ համար։ Ապա մասնաժողովը հաստատեց այն կարգը, որով էլեքտրաքարշի վագօնները երթևեկելու են այսօրվանից ամառվայ ցուցակով։ Վագօնների թիւը լինելու է 83 (այժմ գործում են միայն 61-ը)։ Վերջում մի փոխ-մասնաժողով ընտրվեց ֆունիկուլեօրի երթևեկութիւնը կանօնաւորելու հարցով զբաղվելու համար։

◆ Թիֆլիսի ջրկիրները դիմել են քաղաքային վարչութեան և, պատճառաբանելով որ աշխատանք չը կայ և ձիերի կերակուրը թանգացել է, խնդրում են չը վերցնել քաղաքային այն տուրքը, որ նրանք վճարելու են 1899 թ. հոկտեմբերի 23-ից առ 1907 թ. դեկտ. 31-ը։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութեան ներկայացրած Նախալօվկի գծի կառուցման նախագիծը՝ մի ճանապարհով և հինգ ուղեփոխներով՝ քաղաքային վարչութիւնը ընդունել է և յանձնել նահանգական վարչութեան շինարարական բաժնի հաստատութեան։

◆ Թիֆլիսի հրդեհաշէջների խմբի պետը մի յատուկ բացատրիչ գրութեամբ խնդրել է Թիֆլիսում հաստատել 2-րդ հրդեհաշէջների խումբ։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը Մուխրանեան կամուրջի աշխատանքները, պրոֆէսոր Պաղօնի նախագծի համաձայն, կը սկսէ այս տարվայ աշնանից։

◆ Այսօր տեղի կունենայ կայսերական բժշկական ընկերութեան հերթական նիստը, որին կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձինք։

◆ Կովկասի Փոխարքայի յօբելեանի առիթով Պ. Փրիդօնօվ առևտրական տունը մի վագօն ալիւր է նուիրել Թիֆլիսի քաղաքի աղքատ ազգաբնակութեանը բաժանելու համար։

◆ Որովհետև անդրկովկասեան երկաթուղիների վարչութեան մէջ ներկայումս մեծ թւով կին ծառայողներ կան, անդրկ. երկ. կառավարիչը կարգադրել է այլևս կին չընդունել ծառայութեան ցնոր կարգադրութիւն։

◆ Գօրու գաւառի Սկրա կայարանում երևացել է եղջերաւոր անասունների ժանտախտ։ Կան մահացման դէպքեր։ («Յ.»)

◆ Սուխումի շրջանի ազգաբնակութեան կողմից Թիֆլիս են եկել մի քանի պատգամաւորներ, որոնք Կովկասի Փոխարքայից խնդրելու են ուժեղացնել տեղական ոստիկանութիւնը և ուղարկել մի հարիւրեակ կօզակ։ Իրանց միջնորդութիւնը պատգամաւորները բացատրում են նրանով, որ վերջին ժամանակներս աւազակութիւնները և սպանութիւնները այդ շրջանում բազմացել են։ Ամառը մօտենում է, սակայն հնարաւորութիւն չը կայ կռուել դրանց դէմ, որովհետև աւազակները դիւրութեամբ ապաստան են գտնում մօտակայ անտառներում և լեռներում։

◆ ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Բագուի ծխական համայնքը որոշել է՝ առաջիկայ ապրիլի 6-ին, կիրակի օրը, մի ընտանեկան շնորհաւորանք կատարել իրանց արժանաւոր, տեղիս մայր եկեղեցու աւագ քահանայ՝ Տ. Գրիգոր Գրիգորեանի 35-ամեայ ուսուցչական և 25-ամեայ քահանայական գործունէութեան առիթով»։

◆ ՑԽԻՆՎԱԼԻՑ մեզ գրում են. «Մարտի 25-ին այստեղ մեծ հանդէսով կատարվեց իշխան Վօրօնցօվ-Դաշկօվի 50-ամեայ օֆիցերական ծառայութեան յօբելեանը. այդ օրը ամբողջ Ցխինվալի հայ վաճառականների խանութները փակ էին ի պատիւ իշխանի։ Ցերեկվայ ժամը 12-ին մաղթանք կատարվեց, ուրին ներկայ էին տեղիս «Պօպովեան» հայոց եկ.-ծխ. դպրոցի աշակերտները հանդերձ ուսուցիչներով և հայ հասարակութիւն։ Մաղթանքից յետոյ աւագ քահ. Ծախանեանց քարոզ խօսեց իշխանի արած ծառայութեանց մասին՝ վերաբերեալ Կովկասի ազգաբնակութեան»

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 27-ին, երեկոյեան ժամը 5-ին, Արսենալնի փողոցում № 13 տանը յանկարծակի վախճանվել է առևտրական դպրոցի II դաս. աշակերտ Գուրգէն Մանանդեանը։

◆ Պեսկօվսկայա փողոցում № 91 տանը գտնվող հիւրանոցում մարտի 30-ին, երեկոյեան ժամը 7-ին, երբ Մաշադի Ալիէքբէր-օղլին և Իօսիֆ Պիցելաուրին քէֆ անելիս են եղել, վերջինը կրակել է ատրճանակից և սպանել է Ալիէքբէր-օղլուն։ Մարդասպանին ձերբակալել են։

◆ Մարտի 30-ին, երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին, Ռուսկայա փողոցում հացթուխ Նաբիժան Գզելիձէի և Վարլամ Պօնջավիձէի խանութի առջևով կառքով անցնող անյայտ չարագործներ ատրճանակից մի քանի անգամ կրակել են և սպանել են թոնրի մէջ եղող Գզելիձէին և Ջափարիձէին. Գզելիձէն, հիւանդանոց հասցնելուն պէս վախճանվել է։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մերվ, 19 մարտի

Փետրվարի 23-ին, Մերվի հասարակական ժողովարանի դահլիճում, յօգուտ Թիւրքահայ սովեալների, տեղի ունեցաւ քաղաքիս հայ մշտական թատերասէրների խմբի ներկայացումը։

Թատերասէրների խմբի ներկայացրած հաշւի համաձայն, մուտք եղել է 148 րուբ. 65 կօպ., ելք—60 ր. 90 կ., զուտ արդիւնքից, այն է՝ 87 ր. 75 կ.,—թատերասէրների խումբը դուրս գալով թատրօնական ֆօնդի օգտին $10^{0}/_{0}$—8 ր. 77 կ., մնացածը յանձնել էր Մերվի հայ գաղութի ընդհանուր դրամարկղի վարչութիւնը խմբագրութեանդ ուղարկելու՝ Հանգանակիչ Մասնաժողովին յանձնելու համար։

Ընդհանուր դրամարկղի վարչութիւնը, իր ծրագրի համաձայն, դուրս գալով այդ գումարից $2^{0}/_{0}$ ծախքերի համար 1 ր. 58 կ., մնացածը՝ 77 ր. 40 կ. փոխադրում է խմբագրութեանդ։

Մերվի հայ գաղ. ընդհ. դր. վարչութիւն

Մօսկվա, 23 մարտի

Թոյլ տւէք, խնդրեմ, «Մշակի» միջոցով իմ ստորագրութիւնն էս միացնել գրականագէտների այն բողոքին, որ կայացված է տաղանդաւոր հրապարակախօս Արփիար-Հայկակի տրագիքական մահվան առիթով։

Ոսկու-Զօն

Ցամաքաբերդ գիւղ, 17 մարտի

Երբ մենք ստիպված դառն աղքատութիւնից թողեցինք մեր ծննդավայր Սևանայ լճի մօտ գտնված Ցամաքաբերդ գիւղն ու հեռացանք Բագուի կողմերը աշխատելու, մեր գիւղի բնակիչները զրկված էին բարոյապէս և նիւթապէս բոլոր յայտնի մխիթարութիւնից, մեր որդիքը ընկնված սովի ճիրաններից զանազան մօտիկ գիւղեր թափառում էին աղէտ դրութեամբ։ Իսկ այժմ Եղ. վարդապետ Շահումեանի շնորհիւ Ցամաքաբերդի նման 60 տնից բաղկացած մեր գիւղի յետ ընկած աղքատիկ բնակիչները ունեցան ուսումնարան և կամ եկեղեցի։

Աւելորդ չենք համարում խնդրել հ. Եղիշէից, որ նա կրկին անգամ նիզութիւն կրէր և լրացնէր եկեղեցու մնացեալ պակասութիւնը։ Նաև շնորհակալութիւն ենք յայտնում մեր ուսումնարանի բարերար Տիգրան Աֆրիկեանցին ու մնացեալներին որոնք իրանց արդար վաստակների կոպէկները չը խնայեցին եկեղեցու կառուցման։

Թադէոս Պօղոսեան, Դաւիթ Տէր-Սահակեան, Միսակ Տէր-Մովսէսեան, Տիգրան Պօղոսեան, Մարտիրոս Վարդանեան, Հայրապետ Մարտիրոսեան, Մադաթ Դաւթեան և Զօհրաբ Յովհաննիսեան։

Մօզդօկ, 6 մարտի

Մօզդօկի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների հոգաբարձական-մանկավարժական խառն ժողովը յայտնում է ի գիտութիւն դպրոցական վարչութիւնների և հայ հասարակութեան, որ իրանց կոչմանն անարժան լինելու պատճառով սոյն ուսումնական տարվայ կիսին արձակված են պաշտօնից. 1) կրօնուսոյց՝ Գարեգին քահանայ Ասրեան, 2) ուսուցիչ-խմբապետ՝ Արշակ Տէր-Յովսէփեան և 3) Ուսուցիչ՝ Յակովբ Գենջեան։

Նախագահ խառն ժողովի՝ Ղ. Տէր-Գրիգորեան
Քարտուղար՝ Հ. Հայրապետեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

28 մարտի

ԲՈՐՋՆԱ։ Վախճանվեց երրորդ Դումայի անդամ Ռօդիօնօվը։

30 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետերբուրգի ֆրանսիական նոր դեսպան փոխ-ծովապետ Տուշարը երէկ դեսպանատան պաշտօնեաների հետ ներկայացաւ Թագաւոր Կայսրին և յանձնեց իր հաւատարմագրերը։ Ապա դեսպանը ներկայացաւ Թագուհի Կայսրուհուն։

ՎԼԻԴԻՎՕՍՏՕԿ։ Մարտի 28-ի երեկոյեան ռուսական և ճապօնական մասնաժողովների նախագահները ստորագրեցին Սախալինի սահմանորոշման արձանագրութիւնը։ Հետևեալ օրը ճապօնական մասնաժողովը մեկնեց Տօկիօ, իսկ ռուսաց մասնաժողովը մարտի 30-ին մեկնելու է Խաբարօվսկ հաշիւ պատրաստելու համար։

Արտաքին

28 մարտի

ՓԱՐԻԶ։ Վախճանվեց իտալական դեսպան կոմս Տօրնիէլլին։

ԲԵՐԼԻՆ։ Լանդտագում, բոլոր մինիստրների ներկայութեամբ, իշխան Բիւլօվը կարդաց Թագաւորական հրովարտակը նստաշրջանը փակելու մասին, որովհետև պատգամաւորական լիազօրութիւնների հնգամեայ ժամանակամիջոցը արդէն լրացաւ։ Լանդտագի նախագահը «ուռա» գոչեց ի պատիւ միապետի։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ռուզվէլտը դիմեց կօնգրեսին մի նամակով, որով մատնանշում է անիշխանականութիւնը ճնշելու համար օրէնսդրական միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտութիւնը։ Նախագահը ներկայացնում է գեներալ-դատախազի տեղեկագիրը, որի համաձայն պօստատան գլխաւոր կառավարիչը իրաւունք ունի արգելել պօստով չուղարկել այն բոլոր գրուածքները, որոնք անիշխանական ոգով են գրված։ Նախագահը յայտնում է, որ այդ տեղեկագրի հիման վրա նա կը պատուիրէ պօստատան գլխաւոր կառավարչին՝ թոյլ չը տալ ուղարկելու նմանօրինակ գրուածքներ, և աւելացնում է, որ անիշխանութիւնը ճնշելու գործի հետ համեմատած՝ մնացած բոլոր հարցերը բացարձակապէս նշանակութիւնից զուրկ են. անիշխանականները հասարակութեան և մարդկութեան թշնամիներն են։

ԼՕՆԴՕՆ։ Րէյտերի գործակալութեանը Կալկաթայից հեռագրում են, որ վերջերս ծառայակցական կանօնագրութեան մէջ մտցված փոփոխութիւնների պատճառով, Օստ-Ինդիայի հեռագրական ծառայողները յայտարարեցին ընդհանուր գործադուլ։ Հեռագրական գրասենեակներում առևտրական և մասնաւոր հեռագիրների ահագին քանակութիւն է կուտակվել։

29 մարտի

ԲԵՐԼԻՆ։ Իշխան Բիւլօվը իր կնոջ հետ միասին երէկ, երեկոյեան, մեկնեց Հռօմ։

ՓԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդի նիստում Պիշօնը յայտնեց, որ Կազաբլանկի, Բերրեշիդի և ֆրանսիական բանակների միջև ընկած տարածութեան վրա լիակատար հանգստութիւն է տիրում. համարեա մինչև Ուլեդաեար ազգաբնակութիւնը ոչ մի դիմադրութիւն ցոյց չը տուեց։

Մուլլայ-Հաֆիդը աշխատում է թշնամական տրամադրութիւնը պաշտպանել Մդրակրայի շրջանում, այնտեղ շարունակ ռազմամթերքներ և պաշարեղէն է ուղարկում, գրգռում է նաև կադիներին Կազգանի շրջակայքում ֆրանսիացիների դէմ։

ՎԻԷՆՆԱ։ Աւագների պալատը ընդունեց նորակոչների օրինագիծը։

Պատգամաւորների պալատն ընդունեց հասարակական աշխատանքների մինիստրութիւն հաստատելու օրինագիծը։

30 մարտի

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ։ Ստօրտինգը որոշեց առանց վիճաբանութիւնների Նօրվեգիայի և Շվէյցարիայի միջև ծովային սահման որոշելու գործը յանձնել միջնորդ դատարանի։

ՎԻԷՆՆԱ։ Պատգամաւորների պալատի նիստերը յետաձգված են մինչև ապրիլի 17-ը։

ԲԷԼԳՐԱԴ։ Թագաւորը ընդունեց Պաշիչի կաբինետի հրաժարականը և յանձնեց նրան նոր կաբինետ կազմել։ Նոր կազմի մէջ կը մտնեն բոլոր նախկին մինիստրները, բացառութեամբ ներքին գործերի—Պետրօվիչի, զինուորական—Պուտնիկի և հասարակական աշխատանքների—Իօվանօվիչի։ Զինուորական մինիստր կը նշանակվի դանուբեան զօրաբանակի հրամանատար Ստեպանօվիչը, ներքին գործերի մինիստրի պօրտֆէյլը առաջարկված է պետական խորհրդի անդամ Միլօվանօվիչին։

ԲԵՐԼԻՆ։ «Սիւտ-Դոյտշէ-Բէյխ-Կոր.» լրագիրը հաղորդում է, որ իշխան Բիւլօվի Հռօմ երթալը պատասխան է Տիտտօնի և Ջիօլիտտի մինիստրների Գերմանիա այցելութեան։ Պարզ է, որ պետական կանցլէրը պետական գործիչների հետ խօսակցութիւն կունենայ քաղաքական հարցերի մասին. սակայն այն լուրը՝ իբր երթալը կապ ունի բալկանեան գործերի առիթով թերևս ծագող երկիւղների հետ, մտացածին է. մակեդօնական դժուարութիւնները բնաւ լուրջ սպառնալիք չեն ներկայանում այն մտքով թէ Եւրոպայում համաձայնութիւնը կը խախտվի, ինչքան էլ որ մի քանի շրջաններում ցանկանան, որ պետութիւնները համախմբվեն Գերմանիայի դէմ։

ՓԱՐԻԶ։ Պատգամաւորների պալատը սենատի կատարած խմբագրութեամբ ընդունեց այն օրինագիծը, որի համաձայն եկեղեցական կալուածները անցնում են պետութեան իբրև սեփականութիւն. ապա միաձայն ընդունեց ամնիստիայի օրինագիծը։ Պալատի նստաշրջանը փակվեց մինչև մայիսի 1-ը։

Սենատը ընդունեց արտասահմանեան վեց առևտրական ատտաշէ հաստատելու օրինագիծը։ Նիստերը յետաձգված են մինչև մայիսի 6-ը։

ՎԻԷՆՆԱ։ «Կոր. Բիւրօն» հաղորդում է, թէ այժմ վերջնականապէս պարզվել է, որ գերմանական դաշնակից թագաւորները Վիլհէլմ կայսրի հետ միասին կը շնորհաւորեն Ֆրանց-Յօսէֆ կայսրին։ Վիլհէլմը Վիէննա կը հասնի ապրիլի 24-ին գերմանական կայսրուհու ուղեկցութեամբ։ Վիէննայում այդ օրը կը գտնվեն 14—16 գերմանացի հողատէր իշխաններ։

ԼՕՆԴՕՆ։ Րէյտերին Հօնգկօնգից հեռագրում են, որ ճապօնական ապրանքների դէմ ուղղված բօյկօտի պատճառով, «Ամերիկա-Մարու» նաւը ճանապարհ ընկաւ Սան-Ֆրանցիսկօ առանց որևէ ապրանքի և միայն 25 ճանապարհորդներով, մինչդեռ «Եմպրէյս-օվ-Ինդիա» նաւը մեկնեց հինգշաբթի և տարաւ 730 ճանապարհորդների։

30 մարտի

ԲԷԼԳՐԱԴ։ Երէկ երեկոյեան թագաւորը ստորագրեց մինիստրների կաբինէտի վերակազմութեան հրովարտակը։ Կաբինէտի կազմի մէջ մտան Պաշիչ՝ մինիստր-նախագահ և արտաքին գործերի մինիստր Նիկօլիչ՝ ժողովրդական լուսաւորութեան, Պաչու՝ ֆինանսների, Ստոեանօվիչ՝ երկրագործութեան և հասարակական ժամ. աշխատանքների, Տրիֆկօվիչ՝ արդարադատութեան և ներքին գործերի, գեներալ Ստեպանօվիչ՝ զինուորական։

31 մարտի

ԼՕՆԴՕՆ։ Րէյտէրի գործակալութեանը Կիպրոսի Լարնակա քաղաքից հաղորդում են, որ նոր արքեպիսկոպոս նշանակելու հետ միաժամանակ անկարգութիւններ են ծագել, որը վերջում փոխվել է ընդհարման ոստիկանութեան հետ։ Նիկօսիայում յայտարարված է զինուորական դրութիւն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Հումբաս-Հօվուզ (Անդրկասպեան շրջան), պ. Գ. Կարապետեանին։ Յայտնեցէք՝ ինչ նպատակով էք ուղարկել 10 ր.։

Ջերեմխօվօյ (Սիբիրիա), Արիստակէս ք. Խէմջեանին։ Ձեր յունվարի 27-ի նամակով յիշած 10 ր., յօգուտ Անդրկովկասի հայ սովեալների, դեռ չենք ստացել։

Վառնա, Հայկական ընթերցարանին։ Ձեր ուղարկած $7^{1}/_{2}$ ֆրանկը չենք ստացել։

Երեւան, Իսահակ Տէր-Իսահակեանին։ Ձեր յօդուածը կը տպվի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

Թիֆլիսից Բագու		Բագուից Թիֆլիս	
Արագ. գիշ.	12 ժ. 28 ր.	Արագ. երեկ.	5 ժ. 02 ր.
Պօստ. երեկ.	9 ժ. 41 ր.	Պօստ. ցեր.	12 ժ. 21 ր.
Մարդ. առաւ.	7 ժ. 53 ր.	Մարդ. առաւ.	4 ժ. 58 ր.
Թիֆլիսից Բաթում		Բաթումից Թիֆլիս	
Մարդ. առաւ.	10 ժ. 58 ր.	Մարդ. առաւ.	10 ժ. 38 ր.
Պօստ. առաւ.	9 ժ. 15 ր.	Պօստ. առաւ.	6 ժ. 49 ր.
Մարդ. երեկ.	11 ժ. 22 ր.	Մարդ. երեկ.	5 ժ. 46 ր.
Թիֆլիսից Երեւան		Երեւանից Թիֆլիս	
Պօստ. գիշ.	1 ժ. 8 ր.	Պօստ. ցերեկ.	1 ժ. 18 ր.
Մ.-ապր. ցեր.	3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ա.գ.	12 ժ. 52 ր.
Կարսից. Ալէքսան.		Ալէքսանդր. Կարս	
Պօստ. երեկ.	5 ժ. 48 ր.	Պօստ. ցերեկ.	12 ժ. 23 ր.
*)Մ.-ապր. առ.	5 ժ. 25 ր.	*)Մ.-ապր. գիշ.	3 ժ. 09 ր.
Թիֆլիսից Ջուլֆա		Ջուլֆայից Թիֆլիս	
Պօստ. գիշ.	1 ժ. 08 ր.	Պօստ. գիշ.	6 ժ. 48 ր.
Մ.-ապր. ցեր.	3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ցեր.	6 ժ. 54 ր.

*) Այս գնացքները երթեւեկում են միայն պէտք եղած ժամանակ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9^{1}/_{2}$—2 ժ. ատամի հիւ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^{1}/_{2}$—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—26

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Պրէյսկուրանտ ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмяннаго Хозяйства Квеесъ и К-°
Тифлисъ, Михайловск. пр. № 55.
25—12

Լոյս տեսաւ
„ԳՈՐԾ"
ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
№ 4-ը հետեւեալ բովանդակութեամբ.

Հայոց կաթողիկոսութեան հասարակական արժէքը. II. Կաթողիկոսութիւնը և մանր-բուրժուական Դաշնակցութիւնը։ Բ. Ի.—Շլիսսելբուրգ (բանաստ.) Ս. Համլբաշեան։—Նաւթարդիւնաբերական բանւորների խորհրդակցութեան հարցի շուրջը. Դ. Նորեկ։—Այրին (բանաստ.) Ադա Նեգրիից, թարգմ. Յ. Յ.—Դաշնակցութիւնը ռուսահայերի մէջ. IV. Սօցիալական կամ բանւորական քաղաքականութիւն.—Բ. Իշխանեան։—Կարմիր գոյնը (ալլեգորիա) Կ. Միքայէլեան։

Մարտի 31-ին լոյս տեսաւ
„ԳԵՂԱՐՈՒԵՍՏ"
Գրական գեղարուեստական երաժշտական պատկերազարդ հանդէս
Ա. ԳԻՐՔ—ՄԱՐՏ
(Բովանդակութիւնը տես «Մշակ» № 59)
Բաժանորդագրութիւնը շարունակվում է.

Տարեկան (10 գիրք) արտասահման 40 Ֆր.
Հատավաճառ 2 րուբ. (8 Ֆր.)

Խմբագրութեան հասցէն՝ Бебутовская, № 12. Օտար տեղերից դիմել՝ Тифлисъ, редакція „Гехарвестъ". Հատավաճառվում է և բաժանորդագրութիւն ընդունվում Թիֆլիսում նաև «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութներում, ինչպէս և Սուզանաջեանի հրամշտակ. մագազինում, Բագւում «Сотрудникъ» գործակալութեան մէջ։

Խմբ.-հրատ. Գ. Լևոնեան
(օ. մ.) 5—1

ՅԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ
ի գիտութիւն հայոց եկեղեցականների,
որ մեզ մօտ պատրաստվում են
ՆՇԽԱՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

հայոց ճաշակի, գեղեցիկ քանդակով—խաչելութեան։ Գինը 3 ր., քաղաքից դուրս գնողներին 3 ր. 50 կ.։ Ծախվում է և ծակոտիչ, գինը 50 կ.։ Հասցէն՝ Թիֆլիս, Վիննի-Պաղեօմ, № 47 (7-րդ քաղաքամասում) Գասպար Տէր-Սարգսեանցին
(շ. ե. հ.) 3—2

Աստրախան գնացողներին խնդրում ենք այ
առաջ ունենալ այնտեղ գտնուող
ԱՐՄԷՆԻԱ
ՀԻՒՐԱՆՈՑԸ
(Բիրժայի դիմաց)
որը ունի մաքուր կահաւորված սենեակներ սկսած 50 կոպէկից, ասիական և եւրոպական խոհանոց։ Ստացվում են լրագիրներ։ Գները մատչելի են։
(ու. ե. հ. շ.) 4—2

Առաջին Կովկասեան Պահեստ
ՍԵՐՄԵՐԻ
ԼԱՐՇԷ
Գոյութիւն ունի 1872 թւից
№ 23, Միխայլովսկի պր., № 23
առաջարկում է
ՍԵՐՄԵՐ
ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ
բանջարանոցի
ծաղիկների
խոտերի
ծառերի
ՓՈՐՁՎԱԾ

Ցայտնի ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ Բաղդադի։ Տ
փիգինն է—6 մսխալը—2 րուբլի։ Գու
րով գնողներին զեղջ։
(ա. օ.) 10—7

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES"

7/20 ապրիլի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, առաջնակարգ „Crimée" շոգենաւը, հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ՝ մինչեւ Պարիզ, Նիւ-Եօրք եւ Շանխայ (Չինաստանում), Հեռաւոր Արեւելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան ամենայն օր, բացի կիրակի օրերից։
1—1

ЗАЧѢМЪ ОСТАВАТЬСЯ ТОЛСТЫМЪ?

Знаменитые порошки
Д-ра МАРКОНИ
изготовляемые Хим. Фарм. Общ. „ФАКИРЪ"
въ Берлинѣ W^{15}.
теперь можно получить почти во всѣхъ Аптекахъ и Аптекарскихъ магазинахъ Россіи.
Еженедѣльно уменьшаютъ вѣсъ отъ 2—4 фнт.

Это единственное, разумное, вѣрно дѣйствующее и при томъ вполнѣ безвредное для здоровья средство.

„Медицинскій совѣтъ журнальнымъ постановленіемъ отъ 12 декабря „1906 г. за № 846 призналъ возможнымъ разрѣшить ввозъ въ Россію означеннаго средства, въ качествѣ врачебнаго средства, для продажи изъ „аптекъ безъ рецептовъ врачей, и изъ аптекарскихъ магазиновъ.

Цѣна за коробку хватающую на 1 мѣсяцъ 3 рубля, тройная коробка 7 рублей.
Главный складъ въ Москвѣ у Е. Беверъ, Покровка, д. Арбатскихъ.

Թիֆլիսում, Կովկասեան ընկերութեան դեղագործական ապրանքների վաճառատանը և ուրիշների մօտ։
5—4
(1, 8, 23, 8, 23)

Типографія „Экономія" Авака Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская д. и. Семинаріи № 3.